

Ամերիկայի Նախագահ Գո Պայտըն Պաշտօնապետ Գանչցալ Հայկական Ցեղասպանութիւնը

«Ղարաբաղեան Երկրորդ Պատերազմը Ցեղասպան Գաղափարախօսութեան
Վերածնունդի Վկայութիւնն է», Ըսաւ Վարչապետ Փաշինեան



Նախագահ Սարգսեան, վարչապետ Փաշինեան, Ազգային ժողովի
նախագահ Միրզոյեան Ծիծեռնակաբերդի Յուշահամալիրի մօտ

Միացեալ Նահանգներու նախագահ Ժո Պայտըն պաշտօնապէս ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը եւ այդ բառերը երկու անգամ օգտագործեց Ապրիլ 24-ի իր պատգամին մէջ:

«Ամէն տարի այս օրը մենք կը լիչենք անոնց, որոնք զոհուեցան Օսմանեան Ժամանակաշրջանի Հայոց Ցեղասպանութեան ընթացքին,

եւ մենք պարտաւոր ենք կանխել նման չարագործութիւններու կրկնութիւնը», - ըստած էր Սպիտակ Տան կողմէ հրապարակուած յայտարարութեան մէջ: Այսպիսով Պայտըն կը դառնայ Ամերիկայի առաջին նախագահը, որը 1915 թուականի մէկուկէս միլիոն հայերու կոտորածները կ'անուանէ Ցեղասպանութիւն:



Ամերիկայի Միացեալ Նահանգներու 46-րդ նախագահ Գո Պայտըն

«1915 թուականի Ապրիլի 24-ին սկսած օսմանեան իշխանութիւններուն կողմէ Կոստանդնուպոլսոյ հայ մտաւորականութեան եւ համայնքի առաջնորդներու ձերբակալութիւններէն յետոյ, մէկուկէս միլիոն հայեր տեղահանուեցան, կոտորուեցան կամ մահուան ուղարկուեցան՝ բնաջնջման նպատակով: Մենք կ'ողբակոչենք Մեծ Եղեռնի զոհերը, որպէսզի նախկին սարսափները երբեք մոռացուին»

մատնուած չըլլան պատմութեան համար: Եւ մենք կը լիչենք, որպէսզի մշտապէս զգօն մնանք առեւտրութեան կործանարար ազդեցութեան դէմ պայքարի ընթացքին՝ անոր բոլոր դրսեւորումներով», - կ'աւելցնէ Միացեալ Նահանգներու 46-րդ նախագահը:

«Վերապրածներէն շատերը ստիպուած եղան նոր տուներ եւ

Շար.ը էջ 5

ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը Կողջունէ Նախագահ Գո Պայտընի Ուղերձը

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը կ'ողջունէ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Գո Պայտընի՝ Եղեռնի ոգեկոչման 106-ամեակին առիթով Սպիտակ Տան ուղերձին մէջ «Ցեղասպանութիւն» բառի օգտագործումը:

Պատմական փաստի ճշգրիտ բնութագրումը առաջին հերթին կը սրբագրէ ԱՄՆ նախորդ վարչակազմերու բացթողումը եւ ընդմիշտ վերջ կը դնէ Ցեղասպանութեան հարցի շահարկման տխուր աւանդոյթին, ինչպէս նաեւ ամենամեայ սպասումներուն եւ յուսախաբութիւններուն, որոնց կ'ենթարկուէին ամերիկահայ համայնքը եւ համայն հայութիւնը:

Այս կարեւոր իրադարձութիւնը առաւել եւս կ'իմաստաւորուի այսօր՝ ի տես Ատրպէյճանի կողմէ Արցախի դէմ սանձազերծուած վերջին պատերազմի ընթացքին թուրքոյ ունեցած դերակատարութեան եւ հայ ժողովուրդի դէմ դրսեւորած բացայայտ թշնամական վերաբերմունքին: Միաժամանակ, սա ամերիկայ մերժումն է թրքական իշխանութիւններուն վարած ժխտողական քաղաքականութեան եւ յստակ ուղերձ, որ տասնամեակներ երկարող քաղաքական սպառնալիքներու եւ ապատեղեկատուութեան արշաւը ձախողած է եւ եկած է սեփական պատմութեան հետ առերեսուելու պահը:

Այս առիթով, մեր երախտագիտութիւնը կը յայտնենք նախագահ Պայտընին, որ ճշմարտութիւնը եւ մարդկային արդարութիւնը վեր դասելով քաղաքական նկատառումներ՝ քաջութիւնը ունեցաւ

Շար.ը էջ 5



Լոս Անճելըսահարերը Ոգեկոչեցին Եղեռնի 106-Ամեակը



Տեսարան մը Միացեալ Հայ Երիտասարդներու Հովիվուտի ցոյցէն

Այս տարի քաղաքական եւ ընկերային տարբեր միջնորդներու եւ պաշտօններու մէջ նշուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 106-րդ տարելիցը Լոս Անճելըսի մէջ:

Արդարեւ Համահայկական ոգեկոչման ծրագիր մը որ հեռարձակուեցաւ Ապրիլի 24ին, տեղական հայկական հեռատեսիլի բոլոր

կայաններով եւ առցանց ու դիմատեսրի (Ֆէյսպուք) հաղորդումներով: Ուղղակի եթեր հարցազրոյցներով ելոյթներ ունեցան տեղւոյս հայ քաղաքական (Ս.Դ.Հ.Կ., Ռ.Ա.Կ. եւ Հ.Յ.Դ.) եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներ ու պե-

Շար.ը էջ 5

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ուաշինգտոն-Մոսկուա Խայթոցներ՝ Արցախեան Գակատում

ԷՄՍԱ ԳԱՐՐԻԷԼԵԱՍ

Ռուսաստան-Արևելյան Եվրոպայի միջուկային զբաղմունքները և հասկացողությունը: Ամենօրեայ ռեժիմով արևելյան տարբեր երկրներից հնչում են Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու անհրաժեշտության մասին յայտարարություններ, տարբեր երկրների պաշտօնյաները խօսում են Ռուսական սաստկացող սպառնալիքի մասին:

ԵԱՀԿ Մինսկի խումբն այն բացառիկ հարթակներից մեկ էր մնացել, որտեղ չնայած Ռուսաստան-Արևելյան Եվրոպայի լարված շարժերունքներին՝ ՌԴ-ի, ԱՄՆ-ի ու Ֆրանսայի ներկայացուցիչները հանդէս էին գալիս միասնական տեսակետով:

Լեռնային Ղարաբաղում վերջին պատերազմից յետոյ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունը վերականգնելու ուղղությամբ սկսել են քայլեր իրականացուել, օրերս ԵԱՀԿ ՄԽ-ն հանդէս եկաւ համատեղ յայտարարութեամբ: Չնայած սպասուած համատեղ յայտարարութեանը, ԼՂ հակամարտութեան կարգաւորման գործընթացի վերաբերեալ, կարելի է ասել, ակտիվ դերում հանդէս է գալիս ՌԴ-ն: Իհարկէ, այդ ակտիվությունը մշտապէս վերջին տարիներին արտայայտուել է, ՌԴ նախագահները հանդէս են եկել նախաձեռնողականութեամբ ու նոյնիսկ հնչել են կարծիքներ, որ ԱՄՆ-ի ու ԵՄ-ն էլ գիտակցում են, որ այս տարածաշրջանում օրինաչափ է, որ ՌԴ-ն պէտք է այս հակամարտութեան կարգաւորման հարցում լինի առաւել ակտիվ, շահագրգիռ պետութիւն:

2020թ. Սեպտեմբերին բռնկուած պատերազմից, ապա Նոյեմբերին ստորագրուած եռակողմ յայտարարութիւնից յետոյ էլ աւելի են սրուել Ռուսաստան-Արևելյան Եվրոպայի փոխարարութիւնները: ԼՂ հարցում էլ դիւանագէտները որոշ յայտարարութիւններով սկսել են, կարծես, Ռուսաստանի միջնորդական առանձին ջանքերը ոչ այնքան անընդունելի համարել:

ԱՄՆ-ի պետքարտուղարի օգ-

նականի տեղակալ ձորճ Քենթը առցանց սեմինարի ընթացքում վերջերս կարծիք է յայտնել, որ ԱՄՆ-ը պատրաստ է օգնել Հայաստանին եւ Ատրպէյճանին հակամարտութեան կարգաւորման հարցում, եթէ Պաքոն եւ Երեւանը հետաքրքրուած լինեն դրանով. «Այնքանով, որքանով Հայաստանը եւ Ատրպէյճանը հաւատարիմ են խաղող կարգաւորմանն ու գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների լիազօրութիւններն օգտագործելուն, Միացեալ Նահանգները պատրաստ եւ հաւատարիմ է մնում երկու երկրներին օգնելու ճանապարհ գտնելուն», - ասել էր ամերիկացի բարձրաստիճան դիւանագէտը, միաժամանակ յաւելելով. «Ռուսաստանի մտադրութիւնը մէկ այլ բաց հարց է մնում...»: Նա ակնարկեց էլ, թէ Ռուսաստանը «որոշեց չհամաձայնեցնել հրադադարի պայմանները Մինսկի խմբի համանախագահների մեխանիզմի միջոցով», այլ «դա ուղղակիօրէն ապահովեց եռակողմ ձեւաչափով»:

Ամերիկացի փորձառու դիւանագէտ, ԵԱՀԿ ՄԽ-ի նախկին համանախագահ Ռիչարդ Հոգլանդն էլ, The International Conflict Resolution Center-ի կալքում հրատարակած ծաւալուն յօդուածում անդրադարձել էր ԵԱՀԿ Մինսկի խմբի դերակատարմանը, ԼՂ հակամարտութեան կարգաւորման առաքելութիւնը ստանձնած խմբի տարածաշրջանային ուղեւորութիւններին: «Բաց անկեղծ ասած՝ ձեռքբերումները շատ ու շատ քիչ էին», - խոստովանել էր ամերիկացի դիւանագէտը եւ առանձնացրել ԵԱՀԿ-ի կողմից Մադրիդեան սկզբունքների մշակումը, որին էլ յաջորդել է Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լաւրովի սեփական պլանը: «Մեզ զգուշացրել էին, որ այն անուանէինք պարզապէս սեղանին գտնուող պլան», - գրել էր Հոգլանդը՝ յաւելելով, «երբ պլանը մշակուեց, ես հարցրի իմ հրաշալի գործընկերոջը՝ Ռուսաստանից համանախագահ Պոպովին՝ իսկապէս կրեմլը կը համաձայնի այն իրականացնել, եթէ Երեւանն ու Պաքոն փոխզիջումների գնան եւ ընդուն-

են պլանը: Նրա անկեղծ պատասխանն այսպիսին էր՝ «Իհարկէ», ոչ»: Այդ ժամանակ ես հասկացայ, որ Ղարաբաղը պարզապէս երկկողմ խնդիր է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ, այլ եռակողմ հարց, որում Ռուսաստանն առանցքային դերակատարութիւն ունի, հարավոր է նաեւ՝ վճռորոշ», - եզրակացրել էր նախկին համանախագահը՝ թուարկելով հետխորհրդային տարածքի միւս հակամարտութիւնները՝ Աբխազիա, Հարաւային Օսիա, Մերձդնեստր, Արեւելեան Ուքրաինա, որոնք կարգաւորուած ամենաչարմար թեկնածուն, ըստ Հոգլանդի, Ռուսաստանն է, որը, սակայն, նախընտրում է չանել դա՝ իւրաքանչիւր հակամարտութեանը բնորոշ տարբեր պատճառներից ելնելով. «Ընդհանուր պատճառն այն է, որ հակամարտութիւնների կարգաւորումը իւրաքանչիւր երկրի թոյլ կը տայ բաւականաչափ ազատ զգալ իրեն Մեծ Արջի որջը լքելու համար, այլ գործընկերներ եւ այլընտրանքային դաշինքներ գտնելու համար»: «Միայն այն ժամանակ, երբ արդէն ակնյայտ էր, որ Ատրպէյճանը կարող է գրաւել իր ողջ տարածքը, Մոսկուան խառնուեց եւ կարգաւորեց ստեղծուած իրավիճակը», - գրել էր դիւանագէտը՝ ընդգծելով ՌԴ-ի շահեկան դիրքը 44-օրեայ արիւնայեղութիւնից հետո:

«Մոսկուան այժմ իր զօրքն ունի Հարաւային Կովկասի բոլոր երեք երկրներում՝ Հայաստանում, Ատրպէյճանում եւ Վրաստանում՝ ամրապնդելով իր «ազդեցութեան յատուկ գոտին», - փաստում է դիւանագէտը: Ամփոփելով ծաւալուն յօդուածը, Հոգլանդը կրկին հարց էր բարձրացրել՝ այս պայմաններում արդեօք ԵԱՀԿ Մինսկի խումբը որեւէ անելիք ունի: Երեւանն ասում է՝ այո, Պաքոն՝ ոչ. Ռիչարդ Հոգլանդը կարծում է՝ ունի: Ըստ նրա՝ միջնորդական խմբի մանդատին կարող է աւելանալ եւս մէկը՝ վերակառուցում. Պաքոն ու Երեւանն արդէն իսկ ընդունում են, որ տարածաշրջանի ենթակառուցուածքների վերակառուցման կարիք կայ, կառուցը կարող է օգնել համակարգել մի-

ջազգային կառույցների կողմից ֆինանսաւորումը, մշակել պլան եւ ֆինանսաւորում գտնել Ղարաբաղի ռազմական գործողութիւնների գոտում զարգացում ապահովելու համար: «Ակնյայտ է, որ դա հեշտ չի լինի, Իրանն ու Թուրքիան կը ցանկանան իրենց խօսքն ասել», - համոզմունք էր յայտնել Հոգլանդը եւ այսպէս ամփոփել. «բայց եթէ Մինսկի խումբը չվերանայի իր առաքելութիւնը, դժբախտաբար՝ կը մնայ յետնախորշ միջազգային դիւանագիտութեան մէջ»:

ՌԴ-ից անմիջապէս արձագանքեցին Հոգլանդի յօդուածին: ՌԴ ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան պատասխանել էր Tert.am-ի Հոգլանդի յայտարարութեան վերաբերեալ հետեւեալ հատուածին, որում նա նշել էր, թէ Պոպովն իրեն ասել է, որ նոյնիսկ եթէ հայկական եւ ատրպէյճանական կողմերը համաձայնեն Ս. Լաւրովի՝ ԼՂ-ի կարգաւորման վերաբերեալ գաղափարներին, Ռուսական կողմը չի համաձայնի դրանց իրականացմանը: «Բացարձակապէս չի համապատասխանում: Ռուսաստանը միշտ պատրաստ է եղել կարգաւորման այն տարբերակին, որին հաւանութիւն կը տան հակամարտութեան կողմերը: Այս մասին բազմիցս խօսել է Ռուսաստանի Դաշնութեան նախագահը: Այս դիրքորոշումը որոշիչ է Ռուսաստանի համանախագահութեան աշխատանքում: Թէ ինչով է առաջնորդուել Ռ. Հոգլանդը, որը նման յայտարարութիւն է արել, չեմ պատրաստ-

Շար.ը էջ 15

ԱՄՆ-ի-ը Գանաչեց. Եւ, Ի՞նչ Ենք Անում Յետոյ

ԱՄՆ-ի 46-րդ նախագահ ձօՊայտրնը նախօրէին ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը: Իրավիճակը աննախադէպ է ոչ միայն Հայաստանի շուրջ միջնորդարի եւ միջավայրի առումով, այլ նաեւ միջազգային, ամերիկեան լրահոսի: Ստեղծուած իրավիճակից ակնկալիքները մեզանում պէտք է անցնեն պրագմատիզմի ֆիլտրերի միջով, ձեւաւորելով եւ մշակելով մեզ համար պատասխաններ, որ կան մի շարք հարցերի պարագայում:

Հարցերի հարցն է՝ ո՞րն է Հայաստանի յաջորդ անելիքը, երբ ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումն արդէն իրողութիւն է: Ոգեւորուած շնորհակալութիւնը ԱՄՆ-ի նախագահին բնական է, գնահատանքը հայկական կառուցների կատարած աշխատանքի համար եւս ճիշտ է: Եւ, ի՞նչ ենք անում յետոյ:

Մենք, որպէս հանրութիւն եւ հայրութիւն, ունենք յաջորդական, հայեցակարգային պատկերացում

հայկական հարցի առնչութեամբ մեր քայլերի առումով: Մենք ունենք հայկական հարցի կառավարման տրամաբանութիւն: Այն դէպքում, երբ ակնյայտ է՝ այդ հարցը որքան մերն է, այնքան կամ գուցէ աւելի արդէն աշխարհին է, որպէս քաղաքական գործիք Թուրքիայի հետ յարաբերութիւններում: Հետեւաբար, այստեղ մեզ խանգարող հանգամանքներն են շատ՝ գուտ պրագմատիկ գնահատականի իմաստով, թէ՞ օգնող: Խնդիրը Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը արտաքին քաղաքական օրակարգ ընդգրկելը՝ չընդգրկելու պարզունակ հարցադրումը չէ:

Կարելի է քաղաքականութիւն վարել եւ կառավարել՝ հարցը ընդգրկելով օրակարգ, եւ կարելի է չընդգրկել ու անել նոյնը:

Միաժամանակ հնարաւոր է տապալել ամէն ինչ, կամ պարզապէս ոգեւորուած կամ հիասթափուած դիտորդի դերում լինել միշտ: Եւ ուրեմն, ո՞րն է մեր անելիքը եւ

յաջորդ քայլը, թէ պայմանական, թէ ուղիղ իմաստով, որն է հայկական հարցի միջազգային շրջանառութիւնը կառավարելու մեր տրամաբանութիւնը, կամ կառավարման հասնելու մեր գործողութիւնների յաջորդականութիւնը: Հայկական անկախ պետականութեան երեք տասնամեակում այդ պատասխանները ոչ միայն չեն ձեւաւորուել, այլ խոշոր հաշուով դրանք լղողուել են տարբեր ներքաղաքական նկատառումներից բխող հռչակագրային ձեւակերպումներում եւ քաղաքականութեան հռչակագրային ընթացքում:

Հետեւաբար այստեղ է մեր անելիքը, անկախ այս կամ այն երկրում ճանաչումից: Դրանից իհարկէ ԱՄՆ-ի ճանաչման քաղաքական նշանակութիւնը չի նուազում բոլորովին, բայց գործնականում գրոյհական է մնում այդ ակտերը կապիտալիզացնելու մեր կարողութիւնը: Այստեղ է բուն խնդիրը՝ անկախ որեւէ ճանաչումից: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱՋԱՊԱՂՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Արտահերթ Ընտրութիւններուն Երթալու Նպատակով Փաշինեան Զրաժարական Տուալ Կարչապետի Պաշտօնէն

Յունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն երթալու նպատակով վարչապետ Նիկոլ Փաշինեան Ապրիլ 25-ին հրաժարական տուաւ իր պաշտօնէն: Ժողովուրդին ուղղուած իր ելոյթին մէջ Փաշինեան բացատրեց, որ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ հնարաւոր կը դառնան միայն մէկ պարագայի, երբ ինքը հրաժարական տայ ու խորհրդարանը երկու անգամ չընտրէ վարչապետի թեկնածու:

«Խորհրդարանական մեծամասնութիւնը վարչապետ չի ընտրի, եւ Ազգային ժողովը կը համարուի արձակուած, ու կը նշանակուեն արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ», - ըսաւ ան:

Փաշինեան յայտնեց որ, ինքը կարող էր այլ օր հրաժարական տալ, բայց կարեւոր համարեց այս քայլը առնել «Քաղաքացու օրոնայ» առթիւ. «Սա կարեւոր խորհրդանիշն է այն բանի, որ այսպիսով Հայաստանի Հանրապետութեան քաղաքացուց ստացած իշխանութիւնը մենք վերադարձնում ենք քաղաքացուն, որպէսզի նա՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացին, որոշի իշխանութեան հետագայ ճակատագիրը ազատ, արդար, մրցակցային ընտրութիւններով»:

Նիկոլ Փաշինեան ըսաւ, որ 2020 թուականի աղէտալի իրադարձութիւններու պատճառներու, հիմքերու, լուծումներու մասին արտայայտուեցան գրեթէ բոլորը՝

քաղաքական ուժերը, կառավարութեան անդամներ, մտաւորականներ, հոգեւորականներ, հասարակական կազմակերպութիւններ, ոչ պաշտօնական խումբեր: «Միայն ժողովուրդը կարծիք արտայայտելու ինստիտուցիոնալ հնարաւորութիւն չի ունեցել: Ուրեմն ժողովուրդը պէտք է իր խօսքն ասելու, անցեալի ու ներկայի վերաբերեալ գնահատականներ տալու եւ ապագայի վերաբերեալ որոշումներ կայացնելու հնարաւորութիւն ունենայ»:

Փաշինեան յիշեցուց, որ 2021-ին արտահերթ ընտրութիւններ անցկացնելու առաջարկ ինք ըրած էր տակաւին նախորդ տարուայ վերջին, սակայն շարք մը քաղաքական ուժերու կողմէ այն մերժուած էր: «Մենք հնազանդօրէն կ'ենթարկուենք ժողովուրդի կայացրած որոշումներին եւ անմնացորդ կը կատարենք մեր պարտականութիւնները ժողովուրդի առաջ: Եթէ ժողովուրդը որոշի, որ ես պէտք է հեռանամ վարչապետի պաշտօնից, ես կը կատարեմ այդ որոշումը, եթէ ժողովուրդը որոշի, որ պիտի շարունակեմ պաշտօնավարել որպէս վարչապետ, ես կը կատարեմ այդ որոշումը», - ըսաւ վարչապետը, յայտնելով որ, այս ընթացքին կը շարունակէ կատարել վարչապետի պարտականութիւնները:

Փաշինեանի յայտարարութենէն անմիջապէս ետք նախագահ Արմէն Սարգսեան, ինչպէս նախատեսուած է երկրի Սահմանադրութեամբ, ընդունեց կառավարութեան հրաժարականը:

Երկիրը Խառնելով՝ Կը Ցանկան Իշխանութիւնը Իրենց Կերպարծնել. Անդրանիկ Քոչարեան

Աժ-ի պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեան, անդրադառնալով Սիւնիքի մէջ տեղի ունեցած դէպքերուն եւ անոնց հետագայ զարգացումներուն, նշեց. «Իրաւապահ համակարգը, քննչական մարմինները իրենց գործունէութիւնը պէտք է կառուցեն ճիշդ փաստերի հիման վրայ, մեղադրանքի հիմքում փաստացի նիւթը պէտք է լինի շատ ամուր: Բայց այն, ինչ տեղի է ունեցել, բոլորս ենք տեսել: Այնտեղ (Սիւնիքում) խուլիգանութիւնն ակնյայտ էր: Դրա կազմակերպուածութեան բնույթը պէտք է դարձնել ապացուցելի: Դա շատ կարեւոր է, պէտք է պարզ երեւայ, որ Սիւնիքում ոչ թէ յախուռն գործողութիւններ են տեղի ունեցել, այլ կազմակերպուած սադրանք»:

«Ի պատիւ պետական պահանջարկներին տղաների՝ նրանց սադրանքը կանխուելու, որովհետեւ նրանց ուղաձուր միայն հայցոյն քննարկը ու ինքնաշարժի վրայ կանգնելը չէր: Նրանք շատ կ'ուզէին, որ պետական պահանջարկներն աշխատակիցները գնային կոշտ ուժային հակահարուած կիրառելուն, ինչի իրաւասութիւնն ունէին, սակայն չգնացին դրան: Սա չպէտք է դիտել որպէս թուլութիւն, այլ պէտք է դիտել այն տեսանկիւնից, որ քաղաքական օրակարգ թելադրողը սադրանք իրականացնողները չպէտք է լինեն: Այսօրուայ քաղաքական օրակարգն արտահերթ ընտրութիւնների թափանցիկ անցկացումն է»:

Անդրադառնալով այն պնդումներուն, որ միջադէպի ժամանակ ոստիկանութիւնը անգործութեան մատնուած է՝ Քոչարեան նկատել տուաւ. «Ոստիկանութիւնն իր ուժա-



Պատգամաւոր Անդրանիկ Քոչարեան

յին գործողութիւններից առաջ իրականացնում է շատ աւելի ընկալելի գործիքակազմ. խօսել, բացատրել, համոզել, հեռու պահել սադրանքներից: Ուժ կիրառելն ամենահեշտն է: Եւ այդ փոքրաթիւ սադրիչների վրայ ուժ կիրառելով՝ այդ նոյն սադրիչներին կու տանք հնարաւորութիւն երկիրը տանել խոր ցնցումների... Երկիրը խառնելով՝ նրանք ցանկանում են առիթ ունենալ իշխանութիւնն իրենց վերադարձնելու: Բայց մոռանում են, որ յեղափոխութիւնը դրա համար չի արուած: Յեղափոխութիւնն արուած է, որ այդպիսի երեւոյթները մերժուեն յաւերժ»:

Դիտարկման, որ Սիւնիքի դէպքերուն ականատես ըլլալով՝ քաղաքացիներու մօտ կրկին հարց կ'առաջանայ, թէ ե՞րբ է թաւիշի վերջը, Աժ պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահը նշեց. «Թաւիշի սկիզբը ու աւարտը կ'արձանագրուի Յունիսի 20-ին»:

ԲԻԿ-ն Ընտրութիւններուն Պիտի Մասնակցի Առանձին Ցուցակով

Աժ-ի ԲԻԿ խմբակցութեան պատգամաւոր՝ Միքայէլ Մելքումեան խորհրդարանէն ներս լրագրողներու հետ ճեպագրոցի ընթացքին անդրադարձաւ այն հարցին, թէ ԲԻԿ-ն վարչապետի թեկնածու պիտի չ'առաջադրէ այս փուլին: «Մենք գնում ենք արտահերթ ընտրութիւնների, որը լինելու է Յունիսի 20-ին: Մենք արդէն յայտարարել ենք եւ նորից վերահաստատում ենք՝ ԲԻԿ-ն ընտրութիւններին գնալու է միայնակ: Ծատ կարեւոր է, որ այս նոր ընտրութիւններին դու ումով ես գնում եւ ինչով ես գնում: Այսինքն՝ խօսքն այն մասին է, թէ ինչ քաղաքական խումբով ու ծրագրով ամենակարեւորը: Այդ ումով եւ ինչով գնալու փաստը վերահաստատում է, որ մենք պէտք է գնանք յաղթելու: Եւ դա լինելու է, ես հաւատում եմ, որ մենք անպայման յաղթելու ենք», ըսաւ պատգամաւորը:



ԲԻԿ պատգամաւոր՝ Միքայէլ Մելքումեան

բով պէտք է անպայման յաղթանակ տանենք», - աւելցուց Մելքումեան: «Մինչեւ հրաժարականը կար հարցադրում՝ բայց հաւատո՞ւմ էք, որ այդ ընտրութիւնը կը լինի: Ես երբեք չեմ կասկածել, հիմա մենք գնում ենք նրան, որ Յունիսի 20-ին լինի այդ ընտրութիւնը: Եւ դրանով ժողովուրդին թոյլ տանք, պայման ստեղծենք, որպէսզի այդ 20-ի ընտրութեան միջոցով որոշում կայացնի՝ ով պէտք է լինի իշխանութիւն այս երկրում: Երկրորդ, նոր Հայաստանը պէտք է լինի, թէ՞ մնում է հինը, որը պարտուած է: Եւ երրորդ, որեւէ մէկի մօտ պէտք է կասկած չչարուցի այդ ընտրութիւնների ազատ եւ արդար լինելու փաստը», - ըսաւ Մելքումեան:

Վենետիկի Յանձնաժողովի Կարծիքը Աւելի Դրական Եր, Քան Ես Կը Սպասի. Իոաննիսեան

Վենետիկի յանձնաժողովն ու ԵԱՀԿ/ԺՂՄԳ-ը (ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատութիւններու եւ մարդու իրաւունքներու գրասենեակը) հրատարակեց համատեղ կարծիքով համոզմունք յայտնած են, թէ համամասնական ընտրակարգի պարզեցումը լայն աջակցութիւն ունի քաղաքական ուժերու եւ քաղաքացիական հասարակութեան կողմէ, գոհունակութեամբ նշած են, որ բարեփոխութիւնը կատարուած է տարբեր քաղաքական ուժերու, քաղաքացիական հասարակութեան եւ փորձագիտական համայնքի հետ լայն խորհրդակցութիւններու միջոցով: «Վենետիկի յանձնաժողովի էս կարծիքը նոյնիսկ աւելի դրական էր, քան ես սպասում էի», - ըսաւ Իրագել քաղաքացիներու միաւորման ծրագիրներու համակարգող՝ Դանիէլ Իոաննիսեան:



Իրագել քաղաքացիներու միաւորման համակարգող՝ Դանիէլ Իոաննիսեան

Տարիներ շարունակ ընտրական բարեփոխութիւններուն մասնակցած Իոաննիսեան եւրոպական երկու կառուցներու կարծիքը բացառիկ կը համարէ. - «Կարծում էի, որ Վենետիկի յանձնաժողովն աւելի քան քաղաքացիները կը մօտենայ, բայց նոյնիսկ այդ կէտերի մասով Վենետիկի յանձնաժողովը հասկացել է, որ հայաստանեան շրջածիրէն ներս դա կարեւոր է եւ նոյնիսկ

այդ մասով դրական է արձագանգել: Սա երբեւիցէ ընտրական վերաճեաւորման հետ կապուած Վենետիկի յանձնաժողովի ստուած ամենադրական մօտեցումն է Հայաստանի մասով»:

Եւրոպական կառուցները ոչ միայն ողջունած են նախաձեռնող փոփոխութիւնները, այլեւ անհրաժեշտ համարած հետագայ բարելաւումները: Ճար տրամադրում կուսակցութիւններին», - ըսաւ Իոաննիսեան:

ԼՈՒՐԵՐ

Նախագահ Արմեն Սարգսեան Ծնորհակալութիւն Յայտնած Է Ցեղասպանութիւնը Դատապարտող Երկիրներուն Եւ Կառոյցներուն

«Հայոց ցեղասպանութեան 106-րդ տարելիցը վերստին վկայեց, որ սեփական ցաւը զգում են բոլորը, սակայն խորն ու մարդկային է զգալ ու կիսել ուրիշի՝ ցաւը, աւելին՝ խիզախել եւ բարձրաձայնել այդ մասին», յայտարարած է նախագահ Արմեն Սարգսեան իր շնորհակալական ուղերձով:

«Արդէն իսկ բազմաթիւ երկրների ղեկավարներ, կառավարութիւններ ու խորհրդարաններ, հասարակական, հոգեւոր, գիտական ու ակադեմիական շրջանակներ, միջազգային կառույցներ էին հանդէս եկել 1915թ. Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման կապակցութեամբ: Իմ Հայաստան երկրի, իմ ժողովրդի եւ անձամբ իմ անունից ցանկանում եմ եւս մէկ անգամ շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսքեր ուղղել նրանց բոլորին եւ մեզ սրտակից ժողովուրդների բոլոր գաւակներին», - նշած է ՀՀ նախագահը՝ ուշադրութիւն դարձնելով նաեւ, որ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը ստացաւ ծանրակշիռ ու խիզախ ազդակ մը՝ ի դէմս ԱՄՆ-ի նախագահ՝ Ժո Պայտրոնի Ապրիլ քսանչորսի յայտարարութեան:

«Յաւր համախմբում է մեզ, բայց մենք պէտք է համախմբուենք նախ եւ առաջ յանուն յաջողութեան, ինչպէս նաեւ՝ յանուն մեր անվտանգութեան եւ շահերի: Համազգային միասնութիւնն ու փոխըմբռնումը, համերաշխութիւնն ու հանդուրժողականութիւնը յաջողութեան հասնելու լաւագոյն ճանապարհն են:



Հայաստանի նախագահ Արմեն Սարգսեան

Հայոց ցեղասպանութեան դատապարտման ու ճանաչման իւրաքանչիւր քայլ իւրատեսակ ազդանշան եւ զգուշացում է բոլոր նրանց, ովքեր դեռ ձգտում են յարաբերութիւնները կարգաւորել եւ նպատակներին հասնել բռնի ուժի եւ մարդու իրաւունքների ոտնահարման միջոցով: Երէկ դա Օսմանեան կայսրութիւնն էր, այսօր՝ նրա ժառանգ ժամանակակից Թուրքիան ու վերջինիս «փոքր եղբայր» Ատրպէյճանը: Իսկ ցեղասպանութիւնը վաղեմութեան ժամկէտ չունի...

Ես վստահ եմ, որ ազատ եւ անկախ ապրելու մեր ճանապարհը շարունակական է, որովհետեւ մենք կարող ենք ու յաղթահարելու ենք այդ ճանապարհի խոչընդոտներն ու մարտահրաւէրները, եւ դա անելու ենք նաեւ մեր բարեկամների աջակցութեամբ», - ըստած է Սարգսեանի ուղերձով:

Երեւան Թուրքիոյ Կողմէ Գործնական Քայլեր Կ'ակնկալէ Ոչ Թէ Խօսքեր. ԱԳՆ

Պաշտօնական Երեւանը նկատի առած է Հայաստանի հետ յարաբերութիւններ հաստատելու մասին Թուրքիոյ նախագահ՝ Էրտողանի յայտարարութիւնը, սակայն կը նախընտրէ գործնական քայլեր տեսնել Անգարայէն, Ապրիլ 26-ին, Լիթուանիոյ արտաքին գործոց նախարար Կապրիելլոս Լանտսպլերկիսի հետ կայացած համատեղ ասուլիսին, յայտարարեց արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար՝ Արա Ալվազեան:

Յատկանշական է, որ Թուրքիան նախագահի մակարդակով սկսաւ խօսիլ Հայաստանի հետ յարաբերութիւններ հաստատելու մասին, ԱՄՆ-ի նախագահ՝ Ժո Պայտրոնի կողմէ Հայոց ցեղասպանութեան փաստը ճանաչելու ֆոնին:

«Մենք ծանօթ ենք Թուրքիոյ նախագահի նամակին եւ այնտեղ հնչեցուած պատրաստակամութեանը, բայց պէտք է նշեմ, որ մենք կարեւորում ենք ոչ միայն խօսքերը, այլեւ գործերը, ինչի մասին մենք շատ յստակ արտայայտուել ենք: Նախկինում էլ եղել են նման ուղերձներ, անգամ եղել է ստորագրուած երկկողմ փաստաթուղթ, որը սակայն չի ունեցել դրական շարունակութիւն: Մէկ անգամ եւս ուզում եմ վերահաստատել, որ մեզ համար կարեւոր են ոչ թէ խօսքերը, այլ գործերը», - նշեց Ալվազեան:

Նախարարի պաշտօնակատար՝ Արա Ալվազեան այսօր «շատ մեծ



Արտաքին գործոց նախարար Արա Ալվազեան

աւանդ» որակեց Հայոց ցեղասպանութեան ճանաչման մասին ԱՄՆ-ի նախագահի յայտարարութիւնը:

«Ամբողջովին կիսում եմ նախագահ Պայտրոնի ուղերձում արտայայտուած այն միտքը, որ միջազգային հանրութիւնը պէտք է գործուն քայլեր ձեռնարկի՝ կանխելու նմանօրինակ միջազգային յանցանքների կրկնութիւնն ապագայում: Ցեղասպանութիւնների կանխարգելման ու դատապարտման գործում Հայաստանը միջազգային օրակարգ առաջ մղելու առաջամարտիկներից է, եւ այդ իմաստով նախագահ Պայտրոնի ուղերձը շատ մեծ աւանդ է», - ընդգծեց Արա Ալվազեան:

Էրտողան Կը Քննադատէ Պայտրոնին Ու Կը Յայտնէ Որ, Պատրաստ Է Հայաստանի Հետ Յարաբերութիւններու Հաստատման

Թուրքիոյ նախագահ՝ Ռէճէպ Էրտողան կոչ ըրած է իր ամերիկացի պաշտօնակից՝ Ճոզէֆ Պայտրոնին վերանայելու Հայոց ցեղասպանութեան պաշտօնական ճանաչման որոշումը՝ զայն «սխալ քայլ» որակելով: Այս մասին Թուրքիոյ նախագահը յայտարարեց Ապրիլ 26-ի երեկոյեան Անգարա կայացած ասուլիսի ժամանակ:

Էրտողանի այս յայտարարութիւններէն պարզ դարձաւ, որ պաշտօնական Անգարան առայժմ զերծ կը մնայ Ուաշինկթոնի նկատմամբ կտրուկ քայլեր առնելէ՝ հարկ համարելով միայն յիշեցնել երկու երկիրներու միջեւ տասնամեակներու ընթացքին ձեւաւորուած դաշնակցային յարաբերութիւններու մասին:

«Մենք ՆԱԹՕ-ի կազմին մէջ ընդգրկուած երկու կարեւոր դաշնակիցներ ենք: Ինչպէ՞ս կարող էք դուք Թուրքիան փոխարինել Հիւսիսատլանտեան դաշինքի հետ որեւէ կապ չունեցող հայկական յոյսով», - դիմելով ամերիկեան ղեկավարութեան՝ յայտարարած էր Էրտողան:

Ի դէպ, նշենք որ Թուրքիոյ նախագահի 50-րոպէանոց ելոյթի մեծ մասը հայ-թրքական յարաբերութիւններուն ու անոնց պատմութեան նուիրուած էր:

Յիշելով Օսմանեան կայսրութեան ժամանակ հայերու դերակատարութիւնը, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին տեղի ունեցած իրադարձութիւնները, դարաբաղեան երկու պատերազմներու եւ նոյնիսկ ԱՄԱ-ԼԱ-ի կողմէ թուրք դիւանագէտներու դէմ յարձակումները, Էրտողան ի վերջոյ հասաւ իր ելոյթի գլխաւոր ուղերձներէն մէկուն՝ պնդելով, թէ Անգարան պատրաստ է Հայաստանի հետ յարաբերութիւններու հաստատման:



Թուրքիոյ նախագահ Ռէճէպ Էրտողան

«Մենք հայ հանրութեան հետ որեւէ խնդիր չունինք: Մենք հազար տարի շարունակ կողք-կողքի ապրած ենք, ոմանց հետ այսօր ալ խաղաղ կերպով կ'ապրինք: Մենք կը ցանկանք Հայաստանի հետ բարի դրացիութեան սկզբունքի վրայ հիմնուած յարաբերութիւններ կառուցել: Վերջին 16 տարիներուն մենք [այդ ուղղութեամբ] բազմաթիւ քայլեր ձեռնարկած ենք՝ միշտ զոհաբերութիւններու գնով», - յայտարարած էր Թուրքիոյ նախագահը՝ պնդելով, սակայն, թէ Անգարայի այդ գործողութիւնները այդպէս ալ համարժէք պատասխանի չեն արժանացած:

Վերադառնալով Միացեալ Նահանգներու նախագահի Ապրիլ քսանչորսի ուղերձին՝ Թուրքիոյ ղեկավարը յայտարարած էր, որ այս խնդիրը, երկկողմանի յարաբերութիւններու միւս կնճռոտ թեմաներու հետ միասին, կը պատրաստուի քննարկել արդէն մէկուկէս ամիս ետք Պայտրոնին հետ ՆԱԹՕ-ի գազաթնաժողովի ծիրէն ներս նախատեսուած հանդիպման ընթացքին:

Կարօ Փայլան Հայոց ցեղասպանութեան ճանաչման Օրինագիծ Ներկայացուցած Է Թուրքիոյ Սեճլիսի Նախագահութեան

Թուրքիոյ քրտամէտ ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութեան անդամ, հայ պատգամաւոր՝ Կարօ Փայլան Թուրքիոյ մեծ խիսի նախագահութեան օրինագիծ ներկայացուցած է, որով կ'առաջարկէ ճանաչալ Հայոց ցեղասպանութիւնը, ցեղասպանութեան պատասխանատուներու անունները վերացնել հանրային վայրերէն եւ փոփոխութիւն կատարել Թուրքիոյ քաղաքացիութեան մասին օրէնքին մէջ:

Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրէս»՝ վկայակոչելով Պոլսոյ «Ակօս»-ը, Փայլանի ներկայացուցած օրինագիծի հիմնաւորման մէջ նշուած է, որ Թուրքիոյ Ազգային մեծ ժողովը պէտք է պատասխանատուութիւն ստանձնէ, որպէսզի հայ ժողովուրդի ապրած Մեծ եղեռնը կոշուի իրական անունով: «Մեծ յանցագործութիւնը պէտք է ճանաչուի Թուրքիոյ խորհրդարանի կողմէ, եւ Հայոց ցեղասպանութեան նէն տուժածները 106 տարի անց պէտք է հասնին արդարութեան», - նշուած է նախագիծով:

Փայլան Ապրիլ 24-ին ուղերձ յղած էր, ուր նշած էր, որ Հայոց ցեղասպանութեան հարցով արդարութեան հասնիլ հնարաւոր է միայն Թուրքիոյ մէջ:



Թուրքիոյ մեծ խիսի հայ պատգամաւոր՝ Կարօ Փայլան

«Հայոց ցեղասպանութիւնը տեղի ունեցած է այս հողերուն վրայ, եւ ցեղասպանութեան հարցով արդարութիւնը հնարաւոր է միայն այս հողերուն վրայ: Եթէ Թուրքիան առերեսուի Հայոց ցեղասպանութեան հետ, այլեւ կարեւոր չըլլար, թէ ինչ կ'ըսեն միւս պետութիւններու խորհրդարանները: 106 տարի է, որ կը ժխտուի Հայոց ցեղասպանութիւնը, եւ այդ պատճառով այլ երկիրներու խորհրդարաններու քննարկման առարկայ կը շարունակուի մնալ», - նշած էր Փայլան:

Լոս Անճելըսահարերը Ոգեկոչեցին

Շարունակուած էջ 1-էն

տական դէմքեր: Բոլորն ալ դատապարտեցին Անգարայի ուրացման քաղաքականութիւնն ու ազգայնամոլ կեցուածքը, պահանջելով հատուցում, միաժամանակ դատապարտելով Արցախի 44 օրուան պատերազմին թուրքիոյ գործնական աջակցութիւնն ու մասնակցութիւնը հայաջինջ գործընթացին:

Ժամը 10-ին յուշարձանի կամարներուն ներքեւ տեղի ունեցաւ եկեղեցական յատուկ աղօթք արարողութիւն, սրբադասուած հայնահատակներու յիշատակին: Աւարտին՝ ցեղասպանութեան զոհերու յիշատակը յաւերժացնող ելոյթներով հանդէս եկան հոգեւոր առաջնորդներ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան, Գերպ. Տ. Միքայէլ Եպս. Մուրատեան եւ Վեր. Պերճ Ճամպագեան: Ելոյթներու ընթացքին բջիջային հեռախօսները իսկոյն տարածեցին սպասուած լուրը՝ որով ԱՄՆ-ի նախագահ Ճօ Պայտրն

տի փողոցներով տողանցելէ ետք, ցուցարարները հաւաքուեցան Հոլիվուտ եւ Ուեսթըրն պողոտաներու անկիւնը՝ Հայոց Յեղասպանութեան Չոհերու անուան հրապարակը, ուր ելոյթներ ունեցան գոնկրէսական Ատամ Շիֆ՝ ընթերցելով նոյն պահուն հրապարակուած՝ նախագահ Ճօ Պայտրնի Հայկական Յեղասպանութեան ճանաչման յայտարարութիւնը, Լոս Անճելըսի քաղաքապետ՝ Էրիք Կարսեթի (վիտիոյ ժապաւէնով), Առաջնորդ՝ Յովնան Արք. Տէրտէրեանի ներկայացուցիչ Հայր Վազգէն Մովսէսեան, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ ներկայացուցիչ՝ Վերպատուելի Արա Միխիթարեան իրաւաբան Կարօ Ղազարեանը, Միացեալ Հայ Երիտասարդներու ներկայացուցիչ՝ իրաւաբան Արուսթիւն Յարութիւնեան եւ ուրիշներ:

Օր մը առաջ՝ Ապրիլի 23ին, Պըրպէնքի Ս. Ղեոնդ Մայր տաճարին մէջ տեղի ունեցաւ միջ-շարանուանական յիշատակի պատարագ, մասնակցութեամբ գաղութի հոգեւոր առաջնորդներուն եւ եկե-



պաշտօնապէս կը յայտարարէր Հայոց Յեղասպանութեան ճանաչումը իր կողմէ: Այս լուրն ստեղծեց աննախընթաց երուզեր մը ներկայներուն մօտ, որոնք սկսան բարի լուրով իրար շնորհաւորել՝ հաւատքը եզրափակուեցաւ «Մեր Հայրենիք խմբերգով: Այնուհետեւ ներկայները յուշարձան բարձրանալով գետեղեցին իրենց մեխակները, ապա վերադարձան իրենց տունները որոշ բաւարարութեամբ ու վերապահ լաւատեսութեամբ:

Ապրիլ 24-ի առաւօտեան, Հոլիվուտի «Փոքր Հայաստան» շրջանին մէջ տեղի ունեցաւ Միացեալ Հայ Երիտասարդներ կազմակերպութեան աւանդական քայլերթը՝ հազարաւոր ժողովուրդի մասնակցութեամբ:

Յոյցին կը մասնակցէին Գոնկրէսական Ատամ Շիֆ, Կլէնտէլի Քաղաքապետական խորհուրդի անդամներ, եկեղեցականներ, ՍԴՀԿ ներկայացուցիչներ եւ քաղաքական այլ անձնաւորութիւններ:

Արդարութիւն պահանջող ու Հայ գերիներու ազատ արձակումը պահանջող պատասխանողով, Հայաստանի, Արցախի եւ Միացեալ Նահանգներու դրօշներով Հոլիվու-

ղեցական հայրերուն: Օրուան պատարագին էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան: Յեղասպանութիւնը դատապարտող իրենց սրտի խօսքերով եւ յորդորներով հանդէս եկան պատարագիչ Սրբազանը, ինչպէս նաեւ Արեւմտեան Թեմի Հայց. Առաք. եկեղեցւոյ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Հայ Կաթողիկէ առաջնորդ Գերպ. Տ. Միքայէլ Եպս. Մուրատեան եւ Հայ Աւետ. եկեղեցիներու հովուապետ Վեր. Պերճ Ճամպագեան:

Միեւնոյն օրը երեկոյեան Ս.Դ.Հ.Կ. «Կայծ» Երիտասարդաց Միութեան կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ Չահագնացութիւն, մոմավառութիւն եւ մեխակներու գետեղում փաստինայի Հայ Նահատակներու յուշարձանին: Նահատակներու յիշատակը ոգեկոչող ելոյթով մը հանդէս եկաւ Ալիսան Աֆարի-Թաւուքեան:

Յատկանշանական էր նաեւ այլոց կողքին Գալիֆորնիոյ կառավարիչ Կավըն Նիւսըմի հայանպատ արտայայտութիւնը, իրենց պահանջատիրական արդար դատի իրաւացիութեան մասին:

Ամերիկայի Նախագահ Ծօ Պայտրն

Շարունակուած էջ 1-էն

նոր կեանք գտնել աշխարհի տարբեր կողմերը՝ անոնց շարքին Միացեալ Նահանգներու մէջ: Զօրութեամբ եւ տոկունութեամբ՝ հայ ժողովուրդը վերապրեցաւ եւ վերստին կառուցեց իր համայնքը: Տասնամեակներ շարունակ հայ գաղթականները հարստացուեցան եւ Միացեալ Նահանգները տարբեր բնագաւառներէ ներս, բայց երբեք չեն մոռացած ողբերգական այն պատմութիւնը, որ իրենց նախնիներէն շատերը բերաւ դէպի մեր ափերը: Մենք կը յարգենք անոնց պատմութիւնը: Մենք կը տեսնենք այդ ցաւը: Մենք կը հաստատենք պատմութիւնը: Մենք այդ կ'ընենք ոչ թէ մեղադրելու, այլ ապահովելու համար, որ կատարուածը այլեւս չկրկնուի», - կը շեշտէ նախագահը իր պատգամին մէջ:

«Այսօր, երբ մենք կ'ողբանք մեր կորուստները, եկէք մեր հայեացքը յառնէք ապագային եւ պատկերացնէք այն աշխարհը, որ կ'ուզենք ստեղծել մեր երեխաներուն համար: Աշխարհ մը, որ աղտոտուած չէ մոլեռանդութեան եւ անհանդուրժողականութեան ամենօրեայ չարիքներով, աշխարհ, որտեղ մարդու իրաւունքները յարգուած են, եւ որտեղ բոլոր ժողովուրդները կրնան ապրիլ արժանապատիւ ու անվտանգ կեանքով: Եկէք վերահաստատենք ապագային վայրագութիւնները կանխելու մեր հաստատակամութիւնը՝ աշխարհի որ անկիւնն ալ ըլլայ: Եւ եկէք հասնինք աշխարհի բոլոր ժողովուրդներու հաշտեցման ու ցաւերու ամոքման:

«Ամերիկայի ժողովուրդը կ'ոգեկոչէ բոլոր այն հայերուն, որոնք իրենց կեանքը կորսնցուցին 106 տարի առաջ այս օրը սկսած Յեղասպանութեան հետեւանքով», - կ'ընդգծէ նախագահ Ճօ Պայտրն:

Նոյն օրը, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան նամակ յղեց Միացեալ Նահանգներու նախագահ Ճօ Պայտրնին՝ շնորհակալութիւն յայտնելով Հայոց Յեղասպանութիւնը ճանաչելուն առթիւ: Վարչապետը ընդգծած է, որ այն հզօր քայլ մըն է ճշմարտութեան եւ պատմական արդարութեան ճանապարհին:

Միջազգային Լրատուամիջոցներու Լայն Արձագանքը

Նախագահ Պայտրնի յայտարարութեան նախորդող ու յաջորդող օրերուն ամերիկեան, եւրոպական եւ միջազգային շատ մը

հեռատեսիլի կայաններ եւ լրատուամիջոցներ, լայնօրէն անդրադարձան Հայոց Յեղասպանութեան 106-րդ տարելիցին եւ ԱՄՆ-ի նախագահի կողմէ եղած պաշտօնական ճանաչման կարեւորութեան:

Փաշինեան. Ղարաբաղեան Երկրորդ Պատերազմը Յեղասպան

Գաղափարախօսութեան Վերածնունդի Վկայութիւնն է Ապրիլ 24-ի առաւօտեան նախագահ Արմէն Մարգեան, վարչապետ Նիկոլ Փաշինեան, Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան եւ բարձրաստիճան այլ պաշտօնեաներու եւ օտարերկրեայ պատուիրակութիւններու հետ այցելեցին Միծեռնակաբերդի Յուշահամալիր՝ յարգանքի տուրք մատուցելու Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին:

Յիշեցնելով, որ մէկ ու կէս միլիոն հայեր Օսմանեան կայսրութեան երիտթրքական կառավարութեան յանցաւոր քաղաքականութեան զոհ դարձան, վարչապետը իր օրուայ ուղերձին մէջ ըսաւ. «Հայոց Յեղասպանութիւնը եւ այն ծնած գաղափարախօսութիւնը մնացին անպատիժ: Իսկ անպատիժ մնացած յանցագործութիւնները եւ դրանց սնած գաղափարախօսութիւններն ունեն կրկնուելու եւ վերստին ի յայտ գալու սովորութիւն: Ղարաբաղեան երկրորդ պատերազմը, Արցախում հայ ժողովրդի բնաջնջմանն ուղղուած ատրպէյճանա-թուրքական ագրեսիան, թուրքիայի ծաւալապաշտական արտաքին քաղաքականութիւնը, Հայաստանի հանդէպ տարածքային նկրտումները ցեղասպան գաղափարախօսութեան վերածննդի վկայութիւնն են»:

Շարունակելով Փաշինեան աւելցուց. «Ասուածը, սակայն, որեւէ կերպ չի կարելի մեկնաբանել որպէս տարածաշրջանային երկխօսութեան ժխտում: Մենք պատրաստ ենք դրան: Սակայն մեր պատկերացումը երկխօսութիւնը չի կարող լինել ուժի դիրքերից: Այն կարող է տեղի ունենալ միայն իրաւահասարակութեան սկզբունքով: Մենք երբեւէ հարցականի տակ չենք դնի Հայոց Յեղասպանութեան եղելութիւնը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդ, ի տարբերութիւն նախորդ տարիներուն, իշխանութիւններէն առանձին այցելեց յուշահամալիր՝ կատարելու համար «Մուրք նահատակներու բերխօսական կարգ»:

ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը Կ'ողջունէ

Շարունակուած էջ 1-էն

պաշտօնապէս ճանչնալու Հայոց Յեղասպանութիւնը: Լիպոյս Ենք, որ այս դժուարին հանգրուանին, ԱՄՆ վարչակազմը կ'ընդլայնէ Հայաստանի եւ Արցախի զարգացման ու բարգաւաճման ուղղուած օժանդակութիւնը, ինչպէս նաեւ Միսսիսի խումբի շրջանակէն ներս կը բազմապատկէ իր քանքերը՝ ի խնդիր Արցախի հարցի բարուք լուծման, հիմնուելով ազգերու ինքնորոշման իրաւունքի վրայ:

Այս պատեհ առիթը պէտք է նաեւ խթան հանդիսանայ մեզի, որպէսզի առաջ անցնելով Յեղասպանութեան ճանաչման հանգրուանէն, լծուինք մեր իրաւունքներու վերականգնման գործնական հայեցակարգի ստեղծման: Իսկ այդ դժուարին առաջադրանքը կը կարօտի մարդկային եւ նիւթական հսկայական միջոցներու, որ կրնայ միայն հնարաւոր դառնալ միասնականութեան եւ համայն հայութեան կարողականութեան համատեղման շնորհիւ:

Բիւր յարգանք՝ Յեղասպանութեան եւ Արցախեան պատերազմի նահատակներու յիշատակին:

Ս.Դ.Յնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն Ապրիլ 24, 2021

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ
www.massisweekly.com

Մեր Ուխտը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
«ԱՐԱՐԱՏ» ԼԻԲԱՆԱՆ

Համազգային ուխտի վերանորոգման օրն է այսօր:

Յիշատակի օրն է դաժանագոյն այն ցեղասպանութեան, որուն ականատեսն եղաւ մարդկութիւնը եւ որուն գոհը դարձաւ հայութիւնը՝ աշխարհի հնագոյն ժողովուրդներէն մէկը:

Համաշխարհային պատերազմին ստեղծած թոհուբոհէն խորամանկօրէն օգտուելով, Օսմանեան կայսրութեան օրուան վարիչները շարունակեցին իրենց բնագոյն մէջ արմատացած բարբարոսութիւնը եւ փորձեցին իր լրումին հասցնել Արիւնտ Սուլթանին սկսած հայաջինջ ծրագիրը: Սա գաւթիչ պետութեան մը հետեւողական քաղաքականութիւնն էր, որ կը դրսեւորուէր տարբեր ուղիք պատրուակներով եւ տարբեր առիթներով: Այդ հանգրուաններուն, ինչ խօսք, ան ունէր մեծ պետութեանց լուռ հաւանութիւնը եւ երբեմն բացայայտ նեցուկը: Ուրեմն, հայաջնջման եւ հայկական բնօրրանին իւրացման ստորին վարքագիծը դարձած էր թրքավարի-քրտավարի ստորին ակնդրութիւն, որուն հետեւանքով հետզհետէ կը հիւժէր հայութիւնը, կը կէքէր ծանրածանր լուծի տակ եւ կը լլկուէր ամենայն սառնարտութեամբ: Սակայն, 1915-ին ծրագրուած եւ գործադրուած գազանային սրածուծութիւնը ամենահեղը պիտի ըլլար իր տարողութեամբ, մոլեգնութեամբ, քասքնելի դրուագներով եւ կործանարար հետեւանքներով:

Յեղասպանութիւնը հիմնովին շրջեց մեր պատմութեան երթը: Սերունդներու գիտակցութեան եւ ենթագիտակցութեան մէջ խորապէս դրոշմուկով ան դարձաւ հայ մարդէն անբաժան հոգեբարոյական ու ազգային նկարագրի գիծ մը: Ամէն հայ, ուր ալ կը գտնուի, մերթ սոսկումով, մերթ արցունքով, մերթ վրէժի եւ ատելութեան զգացումով, երբեմն ապրելու եւ արարելու խոստումով կը վերապրի Ապրիլ 24-ը: Եւ միթէ միայն մէկ օր կ'ապրի ան, թէ՛ կեանքի ամբողջ տեւողութեան ընթացքին, քանզի ցեղասպանութեան տապարի հարուածը, հակառակ 106 տարիներու անջրպետին, իր արձագանգներով կը մնայ ահարկու՝ չի շեղուելով մեր անչափելի կորուստները, հայրենազրկումին կակիծը, ձուլման կլանող հոսանքը, թրքական լպիրշ ուրացումները եւ ակելին՝ տակաւին շարունակուող արնածարաւ սպառնալիքները: Երէկի ցեղասպանը, անյազուրդ իր ախորժակներով, վերջերս գտած եւ փարած կը թուի ըլլալ նոյնքան արիւն-ուռչտ իր արենակիցին՝ ազերիին, միասնաբար աքցանելու Հայաստանն եւ ընկճելու ու բզբտելու այն, ինչ որ մնացած է մեզի որպէս հայրենի հող ու բնօրրան:

Միւս կողմէ, լուսթիւնն ու համակերպումը չեն կրնար բանաւոր եւ համոզիչ լուծման հասցնել եւ ամօքել այն վէրքերը, որոնց կտտանքները կը կիզեն մեր հոգիները: Ոչ իսկ ըրալէ մ'իսկ կարելի է խօսիլ մոռացութեան կամ ներողամտութեան մասին: Ոչ մէկ սերունդ կրնայ մարսել եւ հալած իւրի նման ընդունիլ թուրք-ազերիական միացեալ սադրանքներն ու արարքները,

որոնք անխուսափելիօրէն կը փորձորկեն մեր հոգիները եւ վրէժի հունտերը կը ցանեն հայոց սիրտերուն մէջ: Բացէ՛ք եւ տեսէ՛ք քարտէզը մեզմէ գրաւուած ընդարձակ հայրենիքին, կարդացէ՛ք երկար ցանկը այն սերույց մտաւորականութեան, որ հնձուեցաւ թրքական գերանդիով, գացէ՛ք փորփրեցէ՛ք Տէր Զօրի անապատները, գաղթի ճամբաներուն նահատակուած անշիրիմ խլեակներուն ոսկրտիքը, թրքացած եւ իսլամացած պատանեակները, ծարաւի ու քաղցի պատճառով անապատներու աւազներուն միախառնուած մեր նախնիներուն մասունքները: Տակաւին չէ՞ք լսեր եկեղեցիներէ ու վանքերէ լսուած աղիողորմ ճիչերն ու աղաղակները, որոնք կը բարձրանային առ Աստուած, երբ հազարաւոր հայորդիք՝ մանուկներ թէ ծերունիներ, գոհ կ'երթային լափլիզող հրդեհի հայախանձ բոցերուն: Ո՞վ կրնայ չլիշել վիթխարի հարստութեան կողոպտումն ու թալանը՝ վանքերէն, բնակարաններէն, դաշտերէն ու հովիտներէն: Ձեռագիր մատենաներու եւ գանձերու ապուռ ինչքան թուրքերու հանգիստ ու բարեկեցիկ կեանք ապահովեց: Իսկ փճացած գիրքերու մոխրացած կոյտերը՝ յագուրդ ու բաւարարութիւն՝ մշակութասպան այդ ամբոխին: Ո՞վ կրնայ մէկդի նետել այդ բոլորը, երբ մեր ցասումն ու զայրոյթը չեն կրնար մեղմանալ եւ պիտի չմեղմանան այնքան ատեն՝ որ հայու սիրտ կը տրոփէ այս երկրագունդին վրայ: Չմոռնանք, որ պատմութիւնը վերջակէտ չի ճանչնար: Չմոռնանք, որ երբ կան յիշողներ եւ ծրող սերունդներ՝ անթեղուած կրակը կը մնայ յարաբորբոք ու մշտարծարծ:

Ուխտի օր է այսօր, որովհետեւ ուխտաւորներ կը շարունակեն հաւատարիմ մնալ իրենց նախնիներէն ժառանգած կտակին՝ չմոռնալ մեր պատմութեան սեւ ու սուգ էջերը:

Նաեւ՝ ուխտի օր է, որովհետեւ ուխտապահներ, ստանձնելով ջահը նախորդ սերունդներէն, կը շարունակեն իրաւունքներու տիրացման պայքարը: Ուխտաւորներու բազմութիւնը կը շարունակէ քայլել յամբընթաց ու խոհուն դէպի լեառն Մասիս, մինչ ուխտապահներ իրենց երդումով առաւել կը ջրդեղեն հայու պայքարի ոգին. կը դարբենեն կամքն ու կորովը հայրենասիրութեան եւ վերականգնումին: Աստուք շառահարն եւ դիպուկ պատասխաններ են ցեղասպանութիւնը որոճացած հայասպաններուն՝ քանզի իրենց երազը մնաց անկատար: Մի գուցէ, «յաջողութիւնը» եղաւ ժամանակաւոր, բայց ոչ վերջնական, քանզի հայը կըրցաւ վերապրի՛լ, գարթնի՛լ, ուռճանա՛լ եւ ծառանա՛լ անարդարութեանց դիմաց: Հետզհետէ դարձաւ բուռնցք եւ ոգի՝ խորշելով լալկանութեան եւ կրաւորականութեան ոչ-պատուաբեր իրավիճակէն: Եւ ահա, ամէնուրեք կը տողանցեն ուխտաւորները՝ ինչպէս 1915-ին յուրիւն կը յառաջանային կարաւանները: Երէկ կարաւանները հալածական էին ու կորավիզ, այսօր կարաւանները յաղթական են ու քաջապիւնդ:

106 տարի անցաւ մեծ ու երկար ուխտագնացութենէն: Այդ ընթացքին սգահանդէսն ու հոգեհանգիստը, ողբն ու կորուստը, աղբսագիրն ու ցոյցերը, պա-

Վարչապետ Փաշինեանի Շնորհակալական Նամակը Նախագահ Պայտրնին

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան նամակ յղած է Միացեալ Նահանգներու նախագահ Ժօ Պայտրնին՝ շնորհակալութիւն յայտնելով Հայոց Յեղասպանութիւնը ճանաչելուն առթիւ: Վարչապետը ընդգծած է, որ այն հօր քայլ մըն է ճշմարտութեան եւ պատմական արդարութեան ճանապարհին:

Ստորեւ վարչապետ Փաշինեանի նամակը ամբողջութեամբ է:

Ձերդ Գերագանցութիւն, Հայաստանի ժողովուրդը եւ աշխարհասփիւռ հայութիւնը մեծ ոգեւորութեամբ ընդունեցին 1915-23թթ. Օսմանեան կայսրութեան կողմից իրականացուած Հայոց ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչելու եւ դատապարտելու վերաբերեալ Ձեր ուղերձը: Բարձր եմ գնահատում Ձեր սկզբունքային դիրքորոշումը, որը հօր քայլ է ճշմարտութեան եւ պատմական արդարութեան ճանապարհին եւ անգնահատելի զօրակցութիւն Հայոց ցեղասպանութեան գոհերի ժառանգներին:

Ցանկանում եմ յատուկ նշել նաեւ 2019 թ. ԱՄՆ Կոնգրէսի երկու պալատների կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչման մասին բանաձեւերը եւ արձանագրել, որ Ձեր ուղերձով Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացը Միացեալ Նահանգներում հասաւ իր նպատակին:

Հայոց ցեղասպանութեան ճանաչումը կարեւոր է ոչ միայն 1.5 միլիոն անմեղ գոհերին յարգանքի տուրք տալու, այլեւ նմանօրինակ յանցագործութիւնների կրկնութիւնը կանխարգելելու համար:

Հայաստանի Հանրապետութեան համար ճանաչումն ինչպէս ճշմարտութեան եւ պատմական արդարութեան, այնպէս էլ անվտանգութեան հարց է յատկապէս անցած տարի մեր տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձութիւնների լոյսի ներքոյ:

Այս բոլորին մէջ կայ սակայն գաղափարական առողջ երիտասարդութիւն մը, որ կը պայքարի պահելու համար իր առհաւակական դիմագիծը: Այս երիտասարդները, սակայն, ներկայ իրավիճակին մէջ կը ներկայացնեն փոքրամասնութիւն մը եւ իրապաշտ ըլլալու համար, առայժմ չունին քաղաքական, ընկերային եւ տնտեսական մեր կեանքը բարեփոխելու տուեալներ, որովհետեւ դէմ յանդիման կը գտնուին անպատասխան հարցադրումներու. ինչպէ՞ս կենսաւորել տեսլապաշտութիւնը իշխանատենչական անբարոյութեան այս միջոցներին մէջ. տեսլապաշտութիւնը վերածել միջոցի թէ նպատակի: Եթէ միջոց է, ինչպէ՞ս պայքարիլ հակառակ հոսանքի ահարկու գէնքերուն դիմաց: Եթէ նպատակ



է, այլ խօսքով, վախճանական նպատակի ճամբուն վրայ արդեօք պէտք է սորվիլ խաղին օրէնքները եւ պահպանողական ու փտած հոսանքին գէնքերով պայքարի ՚լ նոյնինքն պահպանողականութեան ու փտածութեան դէմ:

Այս հարցումները հայ երիտասարդութիւնը, սփիւռքի թէ հայրենիքի մէջ, դէմ յանդիման կը դնեն հրամայականի մը, զոր կ'ուզենք բնորոշել նոր մտածողութիւն դարձուածքով. մտածողութիւն մը, որ ունի գիտական հիմք եւ լաւագոյնս կը պատշաճի ներազգային եւ միջազգային իրավիճակներուն: Հինին կառչելու յամառութիւնը, իբրեւ հարազատութեան արտայայտութիւն, կ'առաջնորդէ կեթոյականութեան եւ բնականօրէն՝ ճախողութեան: Իսկ նոր մտածողութիւնը պէտք է ունենայ երազային կամ ցնորատեսական հիմք, այլ պէտք է բիւի առարկայական իրականութիւններէ: Պէտք է փոխենք մեր մտածելու ձեւը, ոչ թէ խորքը: Մեր մտածելաձեւը պէտք է յարմարի 21-րդ դարու արհեստագիտական արագընթաց նուաճումներու հոլովոյթին, ինչու էլ տեսնելու, տուեալներ հաւաքելու, վերլու-

ծելու եւ եզրակացնելու համակարգչային եղանակին: Վերջ ի վերջոյ, պայքարը, շարժումը գիտութիւններն են, իրենց քաղաքական, տնտեսական եւ գիտութեան բազմաթիւ երեսներով:

Ազգային-մշակութային մեր ժառանգութիւնը, մեր արմատներէն եկած աւելը մեզի կրնայ շնորհել հաւատք, սակայն չի կրնար մեզի տրամադրել պայքարի գիտական միջոցները: Պէտք է յամառօրէն կառչինք մեր մշակութային ժառանգութեան եւ անշեղօրէն պահենք մեր ազգային աւանդութիւնները, սակայն ասոնցմէ դուրս չենք կրնար չտեսնել հրամայականը՝ մտածելու նոր եղանակի մը, արդի մտածողութեան մը: Մեր հաւաքական կեանքին մէջ արձանագրուած թերութիւնները չենք կրնար սրբազրել ինքնանպատակ քննադատութիւններով կամ ճառերով, բայց մանաւանդ-բամբասանքներով ու հայհոյանքներով:

Չենք կրնար չփնտռել ազդու գէնքեր, չենք կրնար չտեսնել մեր հաւաքական կեանքին փտտումը,

Շար.ը էջ 15



ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the

2021 AEBU Scholarship Program

Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website
WWW.AEBU.ORG

APPLY NOW
Through June 31, 2020

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

«Հայերը Համաշխարհային Բ. Պատերազմին»

Դոկտ. Զաւէն Մսրրլեանի Նորագոյն Հատորը Լուսաբանելով Մութ Անցեալը Մտածել Կու Տայ Այսօրուան Մասին

ՀՐԱՉ ՍԵՓԵԹԵԱՆ


Ամիսներ առաջ, երբ ծանօթացայ այս հատորին բովանդակութեան, չէի կրնար ընթերցումս պահ մ'իսկ դադարեցնել: Այնտեղ կը տողանցէին ծանօթ-անծանօթ անուններ, ամենատարբեր դիրքաւորումներ, ծածուկ որոշումներ, գաղտնի նամակներ, մեծ պետութիւններու ճղճիմ հաշիւներ, փոքր սեպուղ ժողովուրդներու մեծ դէմքեր...: Դոկտոր Զաւէն Մսրրլեան մանկավարժը, դպրոցի տնօրէնը, երկար տարիներու ծառայութեամբ յարգանք պարտադրող անուն է: Պատմաբան Մսրրլեանը նոյնքան արժանի է մեր խորագոյն ու բարձր դնահատան քին՝ տասնամեակներու վրայ տարածուող պտղանուէր գործով, լոյսին բերելով տասնեակ հատորներ հայոց պատմութեան եւ մանաւանդ Հայ Դատի իրագրեկման ճամբուն վրայ:

Ծնած է Լիբանան: Պէջրութի Ամերիկեան Համալսարանի Պատմութեան ճիւղին ստացած է M.A.-ի տիտղոսը, իսկ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիային՝ Պատուոյ Դոկտորի տիտղոս Հայագիտութեան մէջ: Ամբողջ կեանք մը եղած է ուսուցիչ եւ տնօրէն Պէջրութի Հայ Աւետարանական Գոյնճի: Որպէս պատմաբան, հեղինակած տասնեակէ աւելի հատորներ, խմբագրած է պատմական այլ գիրքեր եւ հեղինակած է հարիւրի մօտ ուսումնասիրութիւններ՝ լոյս տեսած լիբանանահայ մամուլին մէջ: Աշխոյժ մասնակցութիւն բերած է ՀԲԸՄ-ՀԵԸ-ի, ԹՄՄ-ի, Հայ Աւետ. Գոյնճի եւ լիբանանահայ Ապրիլեան միացեալ մարմիններու մէջ:

«Հայերը Համաշխարհային Բ. պատերազմին» նորագոյն հատորին բովանդակութեան առաջին ծանօթացումս տեղի ունեցաւ Արցախեան պատերազմին վաղորդայնին եւ պատերազմի օրերուն. անկարելի էր բաժնուիլ համակարգչին պատաստիկէն: Էջերը կը յաջորդէին իրարու բերելով հերթական նորութիւնը, յոյսը, ապա՝ յուսախաբութիւնը: Մանրամասնութիւններ, իրավիճակներ, փաստեր, թիւեր, անուններ, պատմական լուսանկարներ, փոքր ազգի մը կրած նուաստացումները, հայութեան երազները, մէկ Արեւմուտքէն, մէկ Ռուսիայէն կախեալ ըլլալու ապահովութիւնն ու վտանգը, անորոշութիւնը, մեր քաղաքական կազմակերպութիւններուն փոքրիկ յաջողութիւններն ու միամտութիւնները, հայութեան ստորակաշտութեան բարդոյթը, մեծ պետութիւններու ու թուրքիոյ գերակաշտութեան հիւանդագին բարդոյթները...

Բնականաբար, 471 էջ հաշուող այս հատորը կ'անդրադառնայ 1940-ական թուականներու իրադարձութիւններուն, միջազգային մեծ խաղերուն, Գերմանիոյ եւ Ռուսիոյ միջեւ զարգացող պատերազմին, ուր Խորհրդային Հայաստանն ու Խորհրդային Միութեան հայ գիտնորականներ, կամաւորներ, սովորական քաղաքացիներ եւ արտասահմանի հայեր, կարեւոր, չըսելու համար չըլլող զարգացիւն դեր կատարեցին, հասնելով մինչեւ Պերլին:

Կարելի չէ գրախօսականի մը նեղ սիւնակներուն մէջ ամփոփել




այս գիրքին բովանդակութիւնը: Սակայն, անհրաժեշտ է ծանօթացնել եւ մղել ընթերցողը, որպէսզի անպայման ձեռք անցընէ այս հատորը եւ ընթերցէ: Նորատիպը Դասագիրք է բոլորիս համար, արտերկրի թէ Հայաստանի մէջ բնակող իւրաքանչիւր հայու միտքը լուսաւորող, մեր, շրջանային թէ միջազգային հարիւրամեայ անցեալի քաղաքական վերիվայրումներուն մասին լուսաբանող գիրքն է ան, որ «պարտադիր գրականութեան» ցանկին վրայ ունենալու է իր տեղը: Այդ իսկ պատճառով, այս հատորը անհրաժեշտ է թարգմանել տալ եւ տպագրել մանաւանդ անգլերէնի եւ ռուսերէնի, որպէսզի շատ աւելի մեծ լսարան ունենայ, որպէսզի լայն հասարակութիւնը փաստերով ծանօթանայ Համաշխարհային երկրորդ պատերազմի միջազգային սակարաններու մէջ հայութեան ու Հայաստանին վերապահուած դերին...: Փաստօրէն, ինչ որ 2020-ին տեղի ունեցաւ Հայաստանի ու Արցախի մէջ, շարունակութիւնն է մեր պատմութեան հերթական «ճակատամարտին», շարունակութիւնն է ռուս-թրքական յարաբերութիւններուն, Ռուսիոյ ու Արեւմուտքի մրցակցային քաղաքականութեան, մեր զգացական պոռթկումներուն եւ որոշումներուն, միամտութեան, տհաս կամ անհաս դիւանագիտութեան, դաւաճաններ փնտռելու ներքին թուլութեան:

Զաւէն Մսրրլեան պատմաբանին երկար տարիներու աշխատանքին արդիւնք է այս բովանդակալից հրատարակութիւնը, որ ափսոս, շատ ափսոս, որ սեղանի գիրքը պէտք է դառնար ո'չ միայն Հայաստանի այսօրուան իշխանութեան գործիչներուն, այլ նաեւ երէկուան՝ սերժանտներու անկան, ռուսերթ քոչարեանական եւ լեւոնտէրպետրոսեանական օրերու դեկավարութիւններուն:

Նորատիպ այս հատորը բաղկացած է նախաբանէ, քանչորս գլուխներէ, անձնանուններու եւ տեղանուններու ցանկէ, հեղինակին կենսագրական տուեալներէ: Ներկայացնէ կարգ մը գլուխներու խորագիրները միայն, պատկերացում մը ստանալու համար գիրքին բովանդակութեան մասին.

-Սփիւռքահայ քաղաքական խմորումները Համաշխարհային Բ. պատերազմի նախօրեակին
 -Նացի ցեղապաշտները եւ հայերը
 -Սփիւռքահայ կուսակցութեանց դիրքը 1941 թվականին ԽՍՀՄ-ի եւ Խ.

Հայաստանի պատերազմ մուտքէն ետք
 -Նացի Գերմանիոյ եւ Փանթուրանականներու ծրագիրները Կովկասի մէջ (1941-1942)
 -Հայկական Բարձրաւանդակը




գրաւելու չգործադրուած առաջադրանքը
 -Համաշխարհային Բ. պատերազմի Հայկական Լեզնը
 -Կովկասը ընդդէմ գերմանական նուաճողական ծրագիրներու
 -ԽՍՀՄ-էն անջատողական շարժումներ Կովկասի մէջ (1942)
 -Պերլինի Հայ Ազգային Խորհուրդի «Յայտարարութիւնը»
 -Բ. Աշխարհամարտին Նժդեհի եւ Դրօշի միջեւ պայքարը
 -Ստալինի արտի յաղթանակին ազդեցութիւնը թուրքիոյ եւ Սփիւռքահայութեան վրայ
 -Համաշխարհային Բ. պատերազմի վախճանը եւ հայերը
 Արտասահմանի մէջ գործող ազգային քաղաքական դասական երեք հոսանքները՝ ՀՅԴ, ՌԱԿ եւ ՄԴՀԿ, հասարակական կառույցներէն ՀԲԸՄ-ը, ինչպէս նաեւ ՄԵԾԻ Ծանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, բնականաբար անմասն պիտի չմնային այդ տարիներու վճռորոշ զարգացումներէն: Այս հատորին մէջ յարաբերաբար լայն տեղ գրաւած է ՀՅԴ-ն, տարբեր առիթներով յիշուած են միւս կառույցները: Փաստը կը մնայ փաստ. Դաշնակցութիւնը մերթ բացայայտ, մերթ ծածուկ, փորձած է գործակցիլ միջազգային մեծ ուժերու հետ, անոնք ըլլան Ռուսիա, Անգլիա, Գերմանիա, թէ այլ: Իսկ Խորհրդային Հայաստանի մէջ, որ որպէս մէկ օղակը հսկայ Խորհրդային Միութեան, ամբողջ ներուժը տրամադրուած էր պայքարելով նացի Գերմանիոյ դէմ, յանուն խորհրդային պետութեան շահերուն: Մսրրլեան պատմագիտական տուեալներ կը հրաժեշտէ ընթերցողներուն, որոնք արդիւնքն են երկար տարիներու անոր պրպտումներուն: Խորանալով մանրամասնութիւններու մէջ, այս գիրքը նոր հորիզոններ կը բանայ մեր դիմաց: Վերջապէս, կը կրկնենք՝ Դասագիրք է ան այսօրուան համար:

Անցեալը ուսումնասիրել, սայթաքումներու պատճառները իմանալ, չկրկնել նոյն սխալները: Ժողովուրդ մը, որ մեռնիլ չի գիտեր, պիտի՝ ապրի: Երեսնամեայ Հայաստանի Հանրապետութիւնը պարտաւոր է խորապէս ուսումնասիրել իր դրացի պետութիւնները, շրջանային ուժերը, միջազգային քաղաքական խաղերը եւ վարել հաւասարակշռուած քաղաքականութիւն մը հեռու զգացական պոռթկումներէ, հեռու մեծախօսիկութիւններէ: Զաւէն Մսրրլեանի այս հատորը լրջանալու կը հրաւիրէ մեզ բոլորս: Ազգայինն ու անձնականը այնքան կ'լանած են մեզ, որ չենք տեսներ, չենք ուզեր տեսնել, կամ չենք կրնար տեսնել միջազգային քաղաքականութեան մէջ Հայաստանին վերապահուածը:

Գիրքին Նախաբանին մէջ Մսրրլեանի յիշողութիւնը կ'երթայ մանկութեան տարիներ, 1940-ականներ եւ ընթերցողին կը ներկայացնէ սկսնատեսի այնպիսի վկայութիւններ, որոնք միայն ու միայն կը բարձրացնեն այս հսկայական ուսումնասիրութեան արժէքը: Մէջբերում մը հոնկէ. «Սոյն գիրքը գրելով մեր նպատակը, ոչ հերոսներ, ոչ ալ դաւաճաններ փնտռել է, ոչ մէկ կերպով սեւացրէքեան միտումներ ունի մեր ազգային ներկայ իրականութեան մէջ գործող հայ կազմակերպութիւններուն: Մեր նպատակն է պատերազմի աւարտէն երեք քառորդ դար անցնելէ ետք, Համաշխարհային Բ. Պատերազմի հայկական առնչութիւնները պատմագրել, վաւերացնել, փաստերու եւ կարեւոր սկզբնաղբիւրներու վրայ, որպէսզի ազգովին սերտուին անցեալի պատահարները, ապագայի մտահոգութիւններով: Պէտք է տեղեկանալ անցեալի մասին ինչպէս որ եղած է եւ ոչ թէ որ կը ցանկայինք որ եղած ըլլար»:

Հեղինակը շնորհակալական իր խօսքը կը յայտնէ բոլոր անոնց, որոնք նպաստած են այս հրատարակութեան լոյս ընծայման՝ նիւթեր ուղարկելով, նուիրատուութիւններով թէ այլապէս: Նշենք, թէ գիրքը 2020-ի Դեկտեմբերին լոյս տեսաւ Պէջրութի մէջ, հանգուցեալ Արամ Սեփեթեանի »Սիփան« հրատարակչատունէն եւ հանդիսացաւ Սեփեթեանի »կարապի երգը« կատարելով նախնական սրբագրութիւններն ու խմբագրումները հեղինակին հետ: Գիրքը ունի լաթակազմ եւ թղթակազմ տարբերակ (կողքի ձեւաւորում՝ վազգէն Մուղալեանի):

Ձերմօրէն կը շնորհաւորենք Դոկտ. Զաւէն Մսրրլեանը նման պատմական լուրջ եւ յանդուգն աշխատանքի համար, ուր անոր գիտնականի բախնադիր մօտեցումը միայն կը նպաստէ, որպէսզի դասեր քաղենք մեր անցեալէն եւ ազգային գաղափարախօսութեամբ ու պետական մտածողութեամբ ոտքի պահենք մեր սիրելի հայրենիքը:



MEMBER

NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

Մշակութային Ցեղասպանութեան Ազգային և Միջազգային Ռեպուբլիկները

ԴՈԿՏ. ԳՐԱՅՐ ԵՒՊԵՏԵԱՆ

Մշակույթի հասկացողությունը՝ գեթ ակադեմիական մակարդակի վրայ, սկսած էր Հայկազեան համալսարանի ուսանող էի: Դասացուցակին մէջ ներառուած էին չորս միջ-մշակութային նիւթերու դասապահներ: Իւրաքանչիւր դասապահին մէջ կային միջազգային մշակույթի տարբեր բնագաւառներ եւ գանոնք ընկալելու համար համապատասխան նիւթեր: Իսկ մշակութային արժէքներու գիտակցութիւնս եւ անոնց կիրարկումը սկսած էր գործիս տարածաշրջանը տեղափոխուեցաւ Արաբական Մոցի երկիրները:

Աւելի քան հարիւր եւ չիսուն տարբեր ազգութիւններու եւ մշակույթներ պարունակող այս երկիրները դարձան «մշակութային դպրոց»: Դպրոց մը, ուր սկսայ սորվիլ, թէ մշակույթը կ'ընդգրկէ ամբողջ մարդկային կեանք մը՝ իր կենցաղով, արուեստով, ապրելակերպով, հաւատքով ու տակաւին: Սորվեցայ ճանչնալ ուրիշը, անոր ազգային արժէքները, ապրելակերպը եւ կենցաղը:

Ուրիշին մշակութային արժէքներուն հետ ունեցած հաղորդակցութիւններու մէջէն սկսայ սորվիլ եւ արժեւորել իմ ազգային մշակույթս: Սորվեցայ թէ մշակութային արժէքներու գիտակցութիւնս ճամբայ պիտի հարթէ ուրիշներուն արժէքներուն գիտակցութիւնը: Այս փոխադարձ եւ երկկողմանի յարափերութիւններու եւ հասկացողութիւններու մէջէն համերաշխութիւն մըն է, որ կը ստեղծուի մարդկային կեանքերու մէջ:

Ընկերաբաններ մշակութային տարբերութիւններ հասկացողութիւնը կը համեմատեն բազմամշակույթ ունեցող հաւաքականութեան մը իրականութեան հետ: Մշակութային տարբերութիւնները կը սահմանուին երբ կան տարբեր մշակույթներ եւ գիտակցութիւնը գանոնք ընդունելու, յարգելու, արժեւորելու, քաջալերելու եւ գնահատելու: Մարդ կը սորվի ուրիշէն եւ անոր կեանքին փորձէն եւ արժէքներէն: Բազմամշակույթ երեւոյթը կ'օգնէ, որպէսզի ուրիշին տեսակէտը յարգել եւ ընդունիլ նոյնիսկ երբ այդ տարբեր է: Այս գործընթացը կ'օգնէ, որպէսզի հաւաքականութիւն մը զարգանայ եւ յառաջադասք արձանագրէ: Տարբեր մշակույթներ եւ հաւաքականութիւններ կ'օգնեն մարդկութեան մտածողութեան զարգացման:

Ահա թէ ինչու Արաբական Միացեալ Էմիրութիւնները հիմնած է Հանդուրժողութեան նախարարութիւնը: Անոր գլխաւոր նպատակն է երկրին մէջ ապրող աւելի քան հարիւր եւ չիսուն տարբեր մշակույթներուն եւ ազգութիւններուն միջեւ հաղորդակցութիւն եւ հանդուրժողութիւն ստեղծել, զարգացնել եւ պահպանել: Այսօր այս հանդուրժողականութեան քաղաքականութիւնը կարեւոր ազգակ մըն է այս երկրին յառաջխաղացքին եւ բարօրութեան մէջ:

Հարիւր եւ ինիսուն երկիր եւ աւելի քան եօթը պիլիոն բնակչութիւն կը հաշուէ աշխարհը ներկայիս: Այս պիտի ենթադրէ համաշխարհային համակարգին մէջ ստեղծուած տարբեր մշակույթները իրենց հսկայական տարբերութիւններով

եւ այլազանութիւններով: Եթէ պիտի ուզենք ստեղծել աշխարհ մը, ուր բոլորս միասին ենք, այս պիտի ենթադրէ այլազանութիւնը եւ տարբերութիւնները յարգել, ընդունիլ եւ պահպանել:

Համիտեան Հարդերէն՝ սկսած 19-րդ դարու վերջաւորութեան, եւ հասնելով Ատանայի ու 1915-ի Ցեղասպանութեան, հայը տուաւ աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակ, կորսնցուց մեծ հողատարածք եւ մշակութային աւանդ: Ատալեան այսպէս կը բացատրէ. «Երբ հայկական հողը դատարկուեցաւ իր ժողովուրդէն, անոր մշակութային բոլոր լծակները՝ դպրոց, վանք, արուեստի կոթող եւ պատմական վայրերը կործանուեցան Օսմանեան կառավարութեան կողմէ: Մէկ տարուան մը ընթացքին հայը կորսնցուց իր երեք հազարամեայ պատմութեան ժառանգը: Հայը կրցաւ պահել միայն այն, որ կուգար իր հաւաքական յուշերէն: Յուշերուն մէջ կար իր լեզուն, բանաստեղծութիւնը, երգը եւ ողբերգական ճակատագիրը՝ իմ մահայուն եւ իրեն մնացած մշակույթը»: Ատալեանի յիշատակութիւնը՝ մշակութային ցեղասպանութիւնը, մէկ մեծ եւ ցաւալի ու դժբախտ հետեւանքն է հայուն կրած այս մեծ ոճիրին: Հայը կորսնցուց: Արդեօք միայն հա՞յը: Հապա միջազգային քաղաքակրթութիւնը:

Ռաֆայէլ Լեմգին կը բացատրէ. «Աշխարհը կը ներկայացուի մշակութային եւ մտաւորական ուժով մը, որուն միջոցաւ ալ ան ստեղծուած է, անոր մաս կազմած ազգային միաւորներու ներդրումով: Այս իմաստով, ազգի զարգացումը կը հիմնուի, երբ ան կը կառուցուի համագործակցութեան մը վրայով նոյնիքն այս միաւորներու ինքնուրոյն եւ ինքնատիպ ներդրումներու միջոցաւ եւ իրենց աւանդութիւններու, մշակութային եւ լաւ զարգացած հոգեբանութիւններու մէջէն: Հետեւաբար, ազգի մը ու անոր մշակույթի ոչնչացումը կը ստեղծէ այն իրականութեան ներդրումը: Այս հետեւողականութեամբ համաշխարհային քաղաքակրթութիւններ իրենց յառաջխաղացքը նուաճած են, երբ ազգային իւրաքանչիւր մշակույթներու նկատմամբ եղած է յարգանք եւ գնահատանք: Այս մշակույթին եւ անոր համաշխարհային քաղաքակրթութեան բերած նպաստը պէտք է համեմատել ազգային այլ տեսակի ուժի մը եւ անոր հարստութիւններու հետ»: Լեմգինի տրամաբանութիւնը եւ վերլուծումը յստակ է: Մարդկային կեանքի մէջ ակնյայտ են մշակույթներու փոխ յարափերութիւնները: Զիրար ամբողջացնող եւ գիրար շինող գործընթաց մըն է, որ կը լիցքաւորէ համաշխարհային համակարգը իր արժէքի գրաւականովը:

Հայը իր պիլուքեան իրականութիւններուն մէջէն փորձեց վերակենդանացնել իր մշակույթը: Հայը կերտեց «փոքրիկ Հայաստաններ»: Այս Հայաստաններուն մէջէն հայը կը շարունակէ իր նպաստը բերել համաշխարհային մշակույթին, նոյնիսկ երբ իր պատմութեան ընթացքին ան չարժանացաւ անոր յարգանքին եւ գնահատանքին: Այս հայուն ապրելու վճռակամութիւնն է, բայց նոյնքան նաեւ իր նպաստը

շարունակել բերել համաշխարհային քաղաքակրթութեան:

Այսօր տակաւին կը շարունակուի մշակութային ցեղասպանութիւնը: Պատմական Հայաստանի եւ կիլիկիոյ մէջ եկեղեցիներ ու կոթողներ կը ոչնչանան: Նախիչեւանէն մինչեւ Ղարաբաղ-Արցախ հայկական կը քանդուի եւ կամ կը վերածուի Ալպանականի: Տակաւին կը շարունակուի սրբապղծութիւնը հայկական վանքերու եւ եկեղեցիներու՝ Մակարա վանք եւ հայ աւետարանական եկեղեցիի եկեղեցաշէնքը, բռնագրաւուած կիպրոսի տարածքին:

Արդեօք ինչքան տեղ կը գրաւեն մշակութային ցեղասպանութիւնը եւ անոր կանխարգիւման միջոցառումները միջազգային ընտանիքներու եւ անոնց համապատասխան կառույցներուն համար: Եթէ դրական աշխարհ մը պիտի ուզենք ստեղծել, անհրաժեշտ է յարգել եւ գիտակցիլ իւրաքանչիւր ազգային մշակութային ժառանգը, որովհետեւ այդ պիտի նպաստէ համաշխարհային մշակույթի եւ քաղաքակրթութեան յառաջխաղացքին եւ մէջտեղ պիտի բերէ համերաշխութիւն եւ հանդուրժողականութիւն:

Մշակութային ցեղասպանութիւնը ունի իր ժխտական ու բացասական անդրադարձը ազգային եւ միջազգային ընդհանրական կեանքերուն վրայ: Անհրաժեշտ է, որ միջազգային ընտանիքը շատ աւելի լուրջ եւ անշահախնդիր մօտենայ այս հրատապ հարցին: Քաղաքական վարկածներէ եւ հաշուարկումներէ շատ աւելի վեր պէտք է դասել մշակութային ժառանգութիւնը եւ անհրաժեշտ միջոցառումներ որդեգրել պահպանելու համար գանոնք:

Ներհայկական ու ազգային մակարդակներու վրայ անհրաժեշտ է, որ Հայաստանի պետութիւնը վերատեսուութեան ենթարկէ իր որոշումը եւ վերահաստատէ մշակույթի նախարարութիւնը: Մեր ազգային

մշակութային հարստութիւնը՝ իմ մա փափուկ ուժը, պէտք է պահպանուի եւ պաշտպանուի: Կարելի է ներկայ մարտահրաշքները տնօրինել յանձնակատարի մակարդակի վրայ, ինչ որ է պարագան ներկայիս:

Մեհմեդ Ալի Բիրանը, թուրք լրագրող եւ քաղաքական մեկնաբան, 1984 թուի «Միլիթ» թերթին մէջ կ'ըսէ. «Հեշտ համարէք հայկական հարցը: Այդ ոչ կիպրոսի խնդրին կը նմանի ոչ ալ Եգէճական կղզիներու խնդրին: Հարցին տեսանկյունի մասը թերեւս փոքր է, բայց անտեսանելի մասը մեծ սառնակոյտի նման է, որ իր հետ կը բերէ ուրիշ աւելի մեծ եւ կարեւոր խնդիրներ: Այս մեծ հարց մըն է, որուն հաշուեցուցակը շատ ծանր կրնայ նստիլ մեր վրայ»:

«Մեր վրան» կ'ընդգրկէ թուրք բաց նաեւ բոլորը: Թէ ժողովուրդի մը ոչնչացումը պիտի ունենայ իր յետադարձ եւ ժխտական անդրադարձը նոյնիքն գայն գործադրողին վրայ: Ժխտական անդրադարձ իր կեանքին, մշակույթին եւ արժանահաւատութեան վրայ, որովհետեւ ցեղասպանութիւնը իր մարդկային, ընկերային, մշակութային եւ պատմական հետեւանքները ունի եւ կը շարունակէ ունենալ ազգային եւ միջազգային լծակներու եւ դիտարկումներու մէջէն:

Եթէ աշխարհ պիտի աճի, զարգանայ, եւ կերտէ համերաշխ եւ հանդուրժող կեանք, պարտի յարգէ, գիտակցի, ընդունի եւ պահէ տարբեր մշակույթները: Այլապէս աշխարհ պիտի կրէ հետեւանքները եւ պատասխանատուութիւնը:

Այս պարագային հայուն մշակութային ցեղասպանութիւնը: Եթէ հայուն ի վնաս է, նոյնքան աշխարհի:

Մինչ այդ պատմութիւնը կը շարունակէ վկայել, թէ մշակութային ցեղասպանութիւնը ունի իր ազգային եւ միջազգային հետեւանքները:

St. Gregory Armenian Church, Pasadena

Abp. Hovnan Derderian
Primate of the Western Diocese
Will Preside Over

The Historic Groundbreaking Ceremonies of the MUSHEGAIN PAVILION




And the Unveiling of the plans for the HEROES OF ARTSAKH PRAYER GARDEN Luncheon and Special Program Honoring the Mushegain Family

Sunday, May 16, 2021 Immediately Following Services

ՄՈՒՇԵԳԱՆ ՏԱՂԱՒԱՐԻ ՀԻՄՆԱՐԿԷՔ Եւ Արցախի Հերոսներուն Աղօթքի Պարտէզի Ծրագրին Ներկայացում

Կիրակի, Մայիս 16, 2021 Մտրք Պատարագէն Անմիջապէս ետք

For Reservations Please call 626-4491523
DONATION \$25 - STUDENTS \$20

Յոնի Ա. Բարթուղիմէոս Տաճարին Մէջ Միջեկեղեցական Արարողութիւն Ծնդասպանութեան Սուրբ Նահատակներու Յիշատակին Նուիրուած



Հայոց ցեղասպանութեան Սուրբ Նահատակներու յիշատակի օրուան առիթով միջեկեղեցական արարողութիւն կատարուեցաւ Հռոմի Սբ. Բարթուղիմէոս տաճարին մէջ նախաձեռնութեամբ՝ Սուրբ Աթոռի մօտ Հայ Եկեղեցւոյ ներկայացուցիչ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի, Քրիստոնէական միասնութեան խթանման քահանայապետական խորհուրդի նախագահ կարտինալ Կուրտ Կոխի եւ մասնակցութեամբ՝ Սուրբ Աթոռի մօտ եւ Իտալիոյ մէջ ՀՀ դեսպաններ՝ Կարէն Նազարեանի եւ Ծովինար Համբարձումեանի, ինչպէս նաեւ Քահանայապետական Լեւոնեան Հայ վարժարանի մեծաւոր Հայր Նարեկ Նամոյեանի:

Արարողութեան ներկայ էին Արեւելեան կաթոլիկ եկեղեցիներու ժողովի կառավարիչ կարտինալ Լէոնարտո Սանտրին, ՀՀ կաթոլիկ հայերու առաջնորդ Տ. Ռաֆայէլ Արք. Մինասեանը, Սուրբ Աթոռի մօտ Անգլիկան եկեղեցւոյ ներկայացուցիչ Արք. Եան Էռնեստը, Մշակոյթի քահանայապետական խորհուրդի քարտուղար եպիսկոպոս Փօլ Տայը, դպրոց ուղղափառ, ուղեւորական ուղղափառ, Յոյն, կաթոլիկ, անգլիկան, աւետարանական-լուտերական եւ մեթոտիստական եկեղեցիներու ներկայացուցիչներ, դեսպաններ, ինչպէս նաեւ Իտալիոյ խորհրդարանի անդամներ, հայ հաւատացեալներ եւ հիւրեր:

Արարողութեան ժամանակ, գոր կը հանդիսապետէին Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանն ու կարտինալ Կուրտ Կոխին, ընթացողեցան սուրբգրային հատ-

ուածներ, սաղմոսներ, քարոզներ եւ երգուեցան շարականներ:

Այնուհետեւ Կարտինալ Կոխ իր քարոզի ընթացքին նշեց, որ վատիկան Բ. ժողովը նահատակութիւնը կը ճանչնայ որպէս "Ողորմութեան գերագոյն ապացոյց" ոչ միայն կաթոլիկ, այլ նաեւ քրիստոնէական այլ եկեղեցիներու եւ եկեղեցական համայնքներու նահատակներու համար: "Այս խորը ճանաչումը, հետզհետէ տարածուած է, մանաւանդ անցեալ դարու ընթացքին, որու սկիզբը տեղի ունեցաւ Հայ քրիստոնէաներու մեծ եւ արիւնալի նահատակութիւնը անոնց ցեղասպանութեան ժամանակ, ի յիշատակ անոնց հաւաքուած ենք այսօր աղօթելու" ան ըսաւ: Կարտինալ Կոխ անդրադարձ կատարեց հայ նահատակներուն եւ դիմելով ներկաներուն նշեց, որ անոնք՝ նահատակները, մեզի կը յիշեցնեն, որ նահատակութիւնը քրիստոնէութեան մէջ լուսանցքային երեւոյթ է, այլ՝ եկեղեցւոյ հիմքը: Քրիստոնէայ նահատակը, չի նահատակուիր պարզապէս գաղափարի համար, այլ կը խաչուի «Քրիստոսի հետ» եւ կը մահանայ «մէկուն հետ, ով արդէն մահացած է անոր համար»: Հայ նահատակները իւրովի վկայեցին քրիստոսաբանութեան այս գաղափարը: Ան շեշտեց, որ հայ նահատակներու միջոցով եւ իւրապատուկ ձեւով կատարուած այսօրուան Աւետարանի (Յովհ. 14:1-13) խոստումը այն է, որ անոնք բնակութիւն հաստատած են Աստուծոյ մօտ եւ յաւերժ կը մնան անոր հետ: Ուստի մենք բոլոր հիմքերը ունինք դիմելու անոնց որպէս բարեխօսներու՝ խնդրելով

մեզի ուղեկցիլ մեր երկրային գոյութեան ժամանակ եւ ամրապնդել մեր յոյսը, որ Յիսուս Քրիստոս մեզի համար նոյնպէս տեղ կը պատրաստէ իր Երկնային Հօր տան մէջ: Հայցելով հայ նահատակներու բարեխօսութիւնը, մենք մեր երախտագիտութիւնը կը յայտնենք՝ յանուն Քրիստոսի սիրոյ անոնց կատարած մեծագին վկայութեան համար, որ մեզի ընծայեցին իրենց կեանքի գնով, յաւելցուց կարտինալ Կոխը: Այնուհետ, ան իր խօսքը աւարտեց ըսելով՝ "Երախտապարտ ըլլալով հաւատքի այս վկայութեան համար՝ ես պատիւը ունիմ ձեզ բոլորիդ յղելու Սրբազան Քահանայապետի սրտալի ողջոյնը մի-

փոփոխ խօսքով հանդէս եկաւ Գերշտ. Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանգ ան յիշեց Հռոմի Սրբազան Քահանայապետի կողմէ արտասանուած բառերը 2015 թ. Ապրիլի 12-ին Ս. Պետրոսի տաճարին մէջ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած պատարագի ժամանակ. «Կատարուածը չի չէլ պարտադիր է ոչ միայն հայ ժողովուրդի եւ համընդհանուր եկեղեցւոյ, այլեւ ողջ մարդկային ընտանիքի համար, որպէսզի այս ողբերգութենէն եկող նախագուշացումը մեզի ազատէ վերստին նման արհաւիրքներու մէջ իյնալէ, քանզի անոնք կը վիրաւորեն Աստուծոյ եւ մարդկային արժանա-



ջեկեղեցական արարողութեան բոլոր մասնակիցներու թ": Ապա աւելցուց, որ Սրբազան Քահանայապետը հոգեպէս միասնական եղաւ աղօթքին եւ ձեր բոլորին կը յղէ իր օրհնութիւնը:

Արարողութեան աւարտին ամպատուութիւնը»: Աւարտին, Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակիցներուն, որոնք միասնական աղօթքով Յարուցեալ Քրիստոսէն, Սուրբ Նահատակներէն եւ այլ սուրբերէն աշխարհին խաղաղութիւն հայցեցին:

ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կ'իմանանք թէ Տէր եւ Տիկ. Ուստիս եւ Ռիթա Պուլթրոս-Մագմանեան բախտաւորուած են երկուորեակ մանչ զաւակներով: Շնորհաւորութիւններ եւ երջանիկ կեանքի ամենաջերմ մաղթանքները նորածինին ու հարազատներուն:

Այս ուրախ առիթով նորածիններուն մեծ հայրն ու մեծ մայրը՝ Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Ալիս Մագմանեան \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :-----
 Email: -----



TO DONATE VISIT WWW.ARMENTAFUND.ORG/DONATE

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
 Massis2@earthlink.net

ՄԱՐԱԶԴ



ՍՕՆԱ ՊԱՊԻԿԵԱՆ-ԷԼՔԱՏՈՒՄ
1951-2021

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր տիկնոջ, մօր, քրոջ եւ հարազատին՝ ՍՕՆԱ ՊԱՊԻԿԵԱՆ-ԷԼՔԱՏՈՒՄի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, Ապրիլ 16ին, 2021, յետ երկարատեւ հիւանդութեան:

Թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, Մայիս 6, 2021, առաւօտեան ժամը 10:00ին Live Oak Memorial Park-ի մատրան մէջ, 200 East Duarte Road, Monrovia, CA:

- Սգակիրներ՝ Ամուսինը՝ Էմիլ Էլքատում
- Չաւակը՝ Տէր եւ Տիկ. Ռաքի եւ Ռիթա Էլքատում
- Մայրը՝ Մելինէ Պապիկեան
- Քոյրը՝ Վերապատուելի եւ Տիկ. Տիգրան եւ Սիօն Շանլեան եւ զաւակները
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Սէմ եւ Մայրա Պապիկեան եւ զաւակները
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Արի եւ Սիլվիա Պապիկեան եւ համայն Էլքատում, Պապիկեան, Շուշանեան, Գրիգորեան, Քրիսթօ, Գալուստեան, Աջապահեան եւ Գալայնեան ընտանիքներ եւ հարազատներ:

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

- ԱՐԱ ՊՈՅԱՃԵԱՆի մահուան տխուր առիթով իր եղբոր ընտանիքը Տէր եւ Տիկ. Սեպուհ եւ Արմինէ Պոյաճեան եւ զաւակները կը նուիրեն՝
- Սուրբ Երրորդութիւն եկեղեցու, Թորոնթօ \$600
- Հայաստան Համահայկական Հիմնադրամին, Թորոնթօ \$300
- Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Թորոնթօ \$300
- Արարատ Օրաթերթին, Պէյրութ \$300
- Ապագայ շաբաթերթին, Մոնթրէալ \$300
- Մասիս շաբաթաթերթին, Լոս Անճելէս, \$300

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱԼՊԵՐ ՄԻՆԱՍԵԱՆի անակնկալ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Վարդիվառ եւ Ոսկի Անթոնեան խորազգաց ցաւակցութիւն կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն: Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱԼՊԵՐ ՄԻՆԱՍԵԱՆի մահուան տխուր առիթով Տօթթ. եւ Տիկ. Համբիկ եւ Նայիրա Սարաֆեաններ իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն: Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիս»ին:

Նոր Մտածողութեամբ Օժտուած

Շարունակուած էջ 11-էն

չճանչնալ մեր թերութիւնները եւ ըստ այնմ չհակազդել: Հակազդելու համար պէտք է ունենալ առողջ միտք, նոր մտածողութիւն, որ ծնունդն է միջազգային եւ ներազգային իրավիճակներու առարկայական ծանօթութեան: Մեր դատը թաղելու եւ ընդհանրապէս Հայաստանի ու Արցախի դէմ լարուող դաւերուն դիմաց՝ չենք կրնար մեր վճռականութիւնը չստանալ մեր երիտասարդութեան այլընտրանքէն:

Պաշարը անցեալի պաշտութիւնն է, գիտութիւնն է: Այս օրերուն գիտակցութիւնը սերտօրէն կ'աւելնէ ու գիտութեան: Հաւատքը միշտ դերակատար է, բայց առանց գիտութեան անբաւարար: Գիտութիւնը պէտք է շփոթել ուսման հետ: Այս պարագային, գիտութիւնը ծանօթութիւնն է, առարկայական ծանօ-

թութիւնն է շրջապատի պայմաններուն, խաղին օրէնքներուն: Գիտութիւնը ապագան գնահատող տեսիլք է, ցնորատեսութիւնն է: Գիտութիւնը ծրագրում է:

Կ'արժէ լրջօրէն մտածել այս մասին: Տարակուսանքը եւ հարցադրումները կը նկատուին սկիզբը գիտական մտածողութեան: Պայման է որ տարակուսինք մեր ներկայ իրավիճակով եւ հարցադրումներ կատարենք մեր ապագային նկատմամբ:

Ժամանակն է առողջ քննադատութիւնը նստեցնելու իր բարձր պատուանդանին վրայ եւ պահպանողական պոռոտախօսութիւնները դատապարտելու քաջութեամբ եւ անգիջողութեամբ:

Եւ սկսինք ապագան տեսնել նոր մտածողութեամբ սնած գիտակից երիտասարդութեան այլընտրանին մէջ:

www.civilnet.am

Ուաշինգթոն-Մոսկուա Խայթոցներ

Շարունակուած էջ 2-էն

Լուծ գուշակել: Ցանկանում եմ ընդգծել, որ կարգաւորման առաջարկների փաթեթը, բացի Ատրպէյջանի եւ Հայաստանի դեկավարների հռչակագրից, ներառում էր նաեւ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսայի համատեղ յայտարարութիւնը դրան աջակցելու մասին: Այս երկու փաստաթղթերը, գումարած ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի բանաձեւը, որը հաստատում է Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման վերաբերեալ առաջարկութիւնների փաթեթը, կազմում էին այն ժամանակուայ ռուսական առաջարկների հոլթիւնը, որոնց մասին մանրամասն տեղեկացուած էին միւս համանախագահ երկրները՝ ԱՄՆ-ն եւ Ֆրանսան եւ որին նրանք լիովին աջակցում էին»,-պատասխանել էր Զախարովան:

Ի դէպ, յիշեցնենք, որ ամերիկեան կողմն ամենեւին էլ առաջին անգամ չէ խօսում «Լաւրովի պլանի» գոյութեան մասին: 2018թ. Հոկտեմբերին ԵԱՀԿ Մինսկի խմբում ամերիկացի նախկին համանախագահ Զեյնա Ուորլիքը «Ատլանտեան խորհուրդ» ամերիկեան վերլուծական կեդրոնի «Սառեցուած հակամարտութիւններ եւ Կրեմլի օրակարգը» թեմայով բանավէճի ընթացքում խօսել էր ԼՂ կարգաւորման գործընթացում Ուաշինգթոնի հետաքրքրութիւնների մասին եւ ուշագրաւ գաղտնագործում էր արել: Ուորլիքը նշել էր, որ դարաբաղեան հակամարտութեան դէպքում Մոսկուան չունի հակամարտութիւնն ինքնուրոյն լուծելու իրաւունք: Ի տարբերութիւն այլ հակամարտութիւնների՝ Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը Ղարաբաղում ընդհանուր հետաքրքրութիւն ունեն՝ անկայուն իրավիճակն ու ռազմական գործողութիւնները չեն համապատասխանում երկրներից որեւէ մէկի շահերին. «Այն պլանը, որ պարոն Լաւրովը ներկայացրեց, այնքան էլ տարբեր չէ կարգաւորման այն տարբերակից, որ մենք կը նստէինք ու կը մշակէինք խաղաղութեան պայմանագրի համար»:

Այնուհետեւ 2019թ. Փետրուարին դարձեալ Ռիչարդ Հոգլանդն էր «Ամերիկայի ձայն»-ին տուած բացառիկ հարցազրույցում անդրադարձել «Լաւրովի պլանին»՝ ներկայացնելով իր անձնական կարծիքը: «Մենք գիտենք, որ առկայ է այն, ինչը Մինսկի գործընթացում անուանում են սեղանի վրայ եղած ծրագիր: Դա, այսպէս ասած, գաղտնաբառ է, որով մենք այժմ անուանում ենք շատ պարզ ծրագիր, որն անուանում են նաեւ «Լաւրովի ծրագիր», որովհետեւ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լաւրովը, ով այս խնդրին չափազանց ուշադիր է հետեւում, գիտի խնդրի բոլոր մանրամասնութիւնները, հենց նա է այն անձը, ով գրել է այդ առաջարկութիւնները՝ Լեւոնային Ղարաբաղի խնդիրը մէկընդմիջ տարբաւորելու համար»:

Լրագրողի ճշգրտող հարցին՝ ինչո՞ւ է «Լաւրովի ծրագիրը» տարբերուել «Մարիդեան սկզբունքներից», Հոգլանդը դեռ երկու տարի առաջ պարզաբանել էր. «Այն արմատապէս չի տարբերուել, սակայն առաջարկում է

հանրաքուէ Լեւոնային Ղարաբաղի քաղաքացիներին, այդ թւում՝ եւ ներքին տեղահանուածներին, ովքեր այժմ Պաքուի շուրջ են բնակուած: Այս պահին երկու կողմերն էլ չեն ընդունել այդ ծրագիրը այն պատճառով, որ այդ հանրաքուէի ժամկէտը սահմանուած չէ: Դա մի հանրաքուէ է, որը պէտք է անցնի անորոշ ապագայում: Դա նշանակում է, որ կողմերին կը պահանջուի որոշակի դիւանագիտական վստահութիւն, սակայն հենց հիմա Երեւանն ու Պաքուն ցանկանում են, որ սահմանուած լինի հանրաքուէի ստոյգ օրը»:

Ինչեւէ, «Լաւրովեան պլանի» գոյութեան թեման արդէն այսօր հետաքրքրութիւն է ներկայացնում գուտ որպէս դարաբաղեան կարգաւորման պատմութիւն: Հիմա առաւել կարեւոր է հարցը, թէ ԵԱՀԿ ՄԽ-ի յետագայ գործունէութեան հարցում ինչ դիրքորոշում ունի պաշտօնակա Մոսկուան: Անցեալ շաբաթ կրկին ՌԴ-ից դիրքորոշում հնչեց այս թեմայով: «Կոմերսանտ»-ին տուած ծաւալուն հարցազրույցում Ռուսաստանի նախկին փոխարտգործնախարար, Դաշնութեան խորհրդի միջազգային հարցերով յանձնաժողովի դեկավար Գրիգորի Կարասինն ասել էր. «Կարծում եմ, որ նրանք՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, կարող են օգտակար դեր խաղալ: Այս «եռեակն» ունի փորձ եւ պատկառելի արտաքին աջակցութիւն: Կարելի է վերսկսել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո Ատրպէյջանի եւ Հայաստանի արտգործնախարարների կանոնաւոր հանդիպումների պրակտիկան, ինչը միջազգային մեծ արձագանք կը ստանայ»:

Կարասինը նշանակալի արդիւնք էր համարել այն, որ այսօր տարածաշրջանում հրադադարը վերահսկում են ռուս խաղաղապահները: Նրա խօսքով, այսօր հարցերի հիմնական բլոկը կապուած է հոսմանիտար խնդիրների լուծման հետ՝ ռազմագերիների փոխանակման աւարտի, զոհուածների մարմինների, փախստականների վերադարձի եւ նրանց բնակութեան համար պատշաճ պայմանների ստեղծման հետ: Պաշտօնակա Մոսկուան պարբերաբար յայտարարում է, որ այսօր թիւ մէկ խնդիրը Ղարաբաղում կողմերի միջեւ վստահութեան հաստատումն է: Գրիգորի Կարասինն ասում է հարցազրույցում, թէ այս ուղղութեամբ կոնկրետ քայլեր արդէն արուել են. «Ռուսաստանի նախագահի նախաձեռնութեամբ շարունակուած է քաղաքական հարցերի քննարկումը, ընթանում է հանգուցալուծումների որոնում: Ակտիւօրէն աշխատում է եռակողմ յանձնաժողովը փոխվարչապետների մակարդակով, որը քննարկում է տնտեսական, տրանսպորտային, լոգիստիկ խնդիրները»:

Մոսկուան, ըստ ամենայնի, դէմ չի լինի ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունէութեանը: Բացի ԼՂ-ին, Հայաստան-Ատրպէյջան շարաբերութիւններին վերաբերող հարցերից, որոնցում ռուսական կողմն առանց այն էլ ակտիւ ներգրաւուած է, Մոսկուայի համար սա մի առանձնապատուկ հարթակ է, որը արժէք է ներկայացնում արդէն ՌԴ-Արեւմուտք շփումների տեսանկյունից:

«ԱՌԱՒՈՏ»

«Մանչեսթր Սիթին» Յաջորդական Չորրորդ Տարին Դարձավ Անգլիոյ Լիկայի Գաւաթակիր



«Մանչեսթր Սիթին» իր պատմութեան մէջ 8-րդ անգամ դարձավ Անգլիոյ լիկայի գաւաթակիր: Եզրափակիչի խաղի ընթացքին «Մանչեսթր Սիթին» մրցեցաւ «Թոթենհեմի» հետ: Պեպ Գուարդիոլայի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 1:0 արդիւնքով եւ 4-րդ տարին անընդմէջ դարձավ Անգլիոյ լիկայի գաւաթակիր:

«Ռոման» Պարտուեցաւ «Կալյարի» Դէմ

Իտալիոյ ֆութպոլի առաջնութեան 33-րդ հանգրուանին «Ռոման» մրցեցաւ «Կալյարի» դէմ: Խաղի սկսնելէն ընդամենը 4 վայրկեան ետք «Կալյարին» բացաւ հանդիպման հաշիւը: Խաղակէսի 27-րդ վայրկեանին «Ռոման» վերականգնեց հաշուի տարբերութիւնը: Երկրորդ խաղակէսին «Կալյարի» երկու գնդակներուն «Ռոման» կարողացաւ պատասխանել միայն մէկով: «Կալյարի»- «Ռոման»՝ 3:2: Հայաստանի ֆութպոլի ազգային խումբի աւագ Հենրիխ Մխիթարեանը «Ռոմաի» կազմին մէջ չէր, սակայն փոխարինման դուրս եկաւ 58-րդ վայրկեանին: Այժմ «Ռոման» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին վրայ 7-րդն է: «Ինտեր» Միլանի մէջ հիւրընկալեց «Վերոնաին» եւ առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով: «Եուվենթուս» հիւրընկալեց «Ֆիորենտինային»: Այս հանդիպումը աւարտեցաւ ոչ-ոքի՝ 1:1 հաշուով: «Ինտեր» կը գլխավորէ Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակը, «Եուվենթուս»-ը երրորդն է:

«Պարսելոնան» Յաղթեց Գրիզմանի Շնորհիւ

Սպանիոյ ֆութպոլի առաջնութեան 32-րդ «Պարսելոնան» մրցեցաւ «Վիլիաուելայի» հետ: «Վիլիաուելայի» ֆութպոլիստները առաջին կողմը նշանակեցին 26-րդ վայրկեանին: «Պարսելոնան» երկու վայրկեանուան մէջ հաւասարութիւն վերականգնեց: Աչքի ինկաւ Անտուան Գրիզմանը, որ երկրորդ կէսին դարձաւ նաեւ երկրորդ կողմի հեղինակ: «Վիլիաուելայի»-«Բարսելոնա»՝ 1:2: Միւս կողմէ, «Ռեալ» չկարողացաւ սեփական յարկի տակ չկրցաւ յաղթել Սեւիլիայի «Պետիսին»: Խաղը աւարտեցաւ 0:0: «Ռեալ» 33 մրցումէ ետք ունի 71 կէս եւ կը գրաւէ երկրորդ տեղը: Առաջին դիրքի վրայ է Մատրիտի «Աթլետիկոն» (32 խաղ) հաւաքած է 73 միւստը, իսկ լաւագոյն եռեակը եզրափակող գաթալոնական «Պարսելոնան» 31 խաղէն յետոյ ունի 68 միւստը: «Պետիսը» 50 միւստով 6-րդն է:



«Մանչեսթր Եունայթըտ» Հաւասար՝ «Լիտս» Հետ Հանդիպումին

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 33-րդ հանգրուանին «Մանչեսթր Եունայթըտ» հիւրընկալուեցաւ «Լիտս Եունայթըտի» կողմէ: Բոլոր խաղի ընթացքին երկու խումբերն ալ ունէին մի քանի հնարաւորութիւն առաջ անցնելու հաշուի մէջ, բայց չօգտագործեցին առիթները: Հանդիպումը աւարտեցաւ 0-0: Այժմ «Մանչեսթր Եունայթըտ» Պրեմիեր լիկայի մրցաշարային աղիւսակին վրայ 2-րդն է, իսկ «Լիտս Եունայթըտ»՝ 9-րդը: «Լիվերպոլ» սեփական յարկի տակ ընդունած էր «Նիուքասլին»: Եզրափակող յարձակող Մուհամեդ Սալահի նշանակած կողով «Լիվերպոլ» առաջ անցաւ: Սակայն, «Նիուքասլ» կարողացաւ խուսափել պարտութենէն հանդիպման աւելացած 5-րդ վայրկեանին, երբ աչքի ընկաւ Ժոզէֆ Ուիլքընը: Անգլիական Պրեմիեր լիգային մէջ «Լիվերպոլ» 54 կէսով 6-րդ

Արթուր Դաւթեան՝ Եւրոպայի Առաջնութեան Ոսկէ Մետալակիր



Հայաստանի մարմնամարզութեան տղամարդկանց հաւաքականի անդամ Արթուր Դաւթեանը ոսկէ մետալ նուաճեց Պագելի մէջ ընթացող Եւրոպայի առաջնութեան: Հայ մարմնամարզիկը նժոյգ թափեր վարժութեան եզրափակիչին ստացած է 14.266 միւստը եւ ուսու Նիկիտա Նագորնիի հետ հաւասար էր: Սակայն Եւրոպայի ախոյեան հռչակուեցաւ Արթուր Դաւթեանը, որ աւելի բարդ ծրագրով հանդէս եկած էր: Այս մրցումներուն մասնակցած Գագիկ Խաչիկեանը 14.033 միւստով գրաւեց 4-րդ դիրքը: Ան ընդամենը երեք կէսով զիջեցաւ բրիտանացի ձօ ֆրագերին:

Ըմբռնարտի Եւրոպայի Առաջնութեան Մալխաս Ամոյեանը Նուաճեց Արծաթ, Իսկ Սլաւիկ Գալստեանը Եւ Ռուդիկ Մկրտչեանը՝ Պրոնգէ Մետալ



Հայաստանի յունահռոմէական ոճի ըմբռնարտը եւս երկու մետալ նուաճեցին Վարչավայի մէջ ընթացող Եւրոպայի առաջնութեան մրցաշարին: Նախ 67 կգ քաշային Սլաւիկ Գալստեան 1 վայրկեան 56 րոպէ 9:0 հաշուով յաղթեց մոլդովացի Դոնիոր Իսլամովին եւ դարձաւ Եւրոպայի պրոնգէ մետալակիր: 72 կգ քաշային Մալխաս Ամոյեանը եզրափակիչ մրցամարտին փորձեց առաջին անգամ յաղթել մեծահասակներու խոշոր մրցաշարին, սակայն այս անգամ աւելի ուժեղ գտնուեցաւ վրացի փորձառու ըմբիշ Շմազի Բոլկվաձէն, որ միւստընըրով յաղթեց 4:1 հաշուով եւ հռչակուեցաւ Եւրոպայի ախոյեան: Հայ մարզիկը արծաթէ մետալ շահեցաւ: 82 կգ քաշային կարգի մէջ Կարայետ Չալեանը պրոնգէ մետալի համար գոտեմարտին 2:3 հաշուով պարտուեցաւ վրացի Ալենգո Ռիկաձէին եւ մնաց առանց մրցանակի: Հայաստանի յունահռոմէական ոճի ըմբռնարտի հաւաքականը այլեւս մասնակից չունի առաջնութեան մէջ: Յիշեցնենք, որ պրոնգէ մետալ նուաճեց 55 կգ քաշային մրցումին Ռուդիկ Մկրտչեանը:

ՊՍԺ-ն Յաղթեց Մբապի Երկու Կոլերուն Շնորհիւ

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան գործող ախոյեան ՊՍԺ-ն յաղթեց Մբապի երկու կոլերուն շնորհիւ: Լիկայ 1-ի 34-րդ հանգրուանին ՊՍԺ-ն մրցեցաւ «Մեցի» հետ եւ առաւելութեան հասաւ 1:3 արդիւնքով, Մբապի նշանակած երկու կոլերուն շնորհիւ: Մբապէն հանդիպումին վերջաւորութեան՝ 87-րդ վայրկեանին, վնասուածք ստացաւ եւ փոխարինուեցաւ: Մեծ է հաւանականութիւնը, որ ֆրանսացի յարձակողը չի մասնակցի Ախոյեաններու լիկայի կտրաբաժնի հանդիպումին, երբ ՊՍԺ կը մրցի անգլիական «Մանչեսթր Սիթիի» դէմ: Գիրքի վրայ է, իսկ «Նիուքասլը» 36 միւստով 15-րդ տեղը կը գրաւէ: Աղիւսակը կը շարունակէ գլխավորել «Մանչեսթր Սիթին»: